ՓԱՐՈՍ

ԽՄԲԱԳԻՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ

Հրատարակեալ

Ի ԶԱՐՄԱՑՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ

„Լա՛ւ է անագան քան ոչ երբէք“։

(Ա՛ռաջ)։

ՏԵՏՐ Բ՛—1873 ԱՄԻ։

Ի ՄՈՍԿՈՒԱ
Imprimerie W. Gautier,
a Moscou, au pont des Maréchaux, maison Torletzky.
1873.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

ՓԸՐՈՍՆ պիտի հրատարակուի ժամանակ ժամանակ, այն է՝ 'ի տարին զոնէ երկու անգամ։

ՓԸՐՈՍԻ նիւթն է Բանասիրական գիտելիք, և ըստ մեծի մասին Բանաքննական յօդուածներ։

ՓԸՐՈՍԻ հրատարակչին հետ թղթակցել ցանկացողքն իւրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս։ Въ Москву, близъ Меньшиковой башни, домъ Милованова, Г-ну Зармайру Мсеріанцъ.

ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐԵԱՆՔՔ։

1. ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Մանր Ուսմունք Քրիստոնէական հաւատոյ. Մոեցայ Մ. Մոեցեանց. Գին իւրաքանչիւրոյ 25 կ. արծ.

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 22 կոպ.
„ „ „ 50 „ „ 20 „
„ „ „ 100 „ „ 18 „

2. ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Սրբազան Պատմութեան Աւետարանի. Նոյն հեղին. Գին իւրաքանչիւրոյ 40 կ. արծ.

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 35 կոպ.
„ „ „ 50 „ „ 32 „
„ „ „ 100 „ „ 30 „

3. ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական հաւատոյ, բան ուղղափառութեան եկեղեցւոյ Հայաստանեայց. Նոյն հեղին. Գին իւրաքանչիւրոյ 75 կոպ. արծ.

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 60 կոպ.
„ „ „ 50 „ „ 55 „
„ „ „ 100 „ „ 50 „

4. ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Համառօտութիւն Աւետարանական պատմութեան հանդերձ ծանօթութեամբք. Նոյն հեղին. Գին իւրաքան. 50 կոպ. արծ.

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 45 կոպ.
„ „ „ 50 „ „ 42 „
„ „ „ 100 „ „ 40 „

ՏԵՏՐ Բ.—1873 ԱՄԻ.

ՓԱՐՈՍ

ԽՄԲԱԳԻՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԱՑ

Ա Զ Դ

» Թէ ոչքան կարօտին ծովածուփ նաւատաստիք
» ապդիս մերոյ ատատապէրոյ, մանաւանդ 'ի խա-
» ւարաբոբր յայսմ ժամանակի, այլպիսեաց նշու-
» լագեղ Փարոսից՝ 'ի գլուխ ցուցանելոյ հասարակաց՝
» ոչ է հարկ ասել. վասն որոյ ցանկանալով ցան-
» կամ փոյթ ընդ փոյթ բազմանալոյ որոց ըստ
» ման լցեն յարկոցաց գձերդ անակնատուս ձշմար-
» տասիրութիւն, որով և առաւել ևս խրա-
» խուսեսջիք արդեօք 'ի վաստակսդ կարևորս »։

Ահա այսպիսի խօսքերով ողջունելով գ�խմբագիրը, քաջալերում է գՀեղ այս գործը շարունակելու՝ մեր քաջահմուտ հայկական՝ և

քան զբաղումն նշանաւոր 'ի գիտութեան՝ ազգայնոց պատկառելի Անձանց մինն. որում մատուցանելով արդէն մեր առ 'ի սրտէ շնորհակալութիւնը, չեմք կարող չխոստովանիլ՝ թէ նա ճշգրտիւ հասկացած է մեր այս գուշնաքեայ երկասիրութեան բուն և գլխաւոր նպատակը, և այնու կշռութեամբ ևս որոշում է և ցուցանում նորա արժէքը: Սոյգ է, որ մեր նպատակն է գգուշութիւն հատարակաց, և միայն այդ նպատակի հասանելոյ համար պիտի ջանայ և վատակի անշուշտ նորածին Փարոսն, եթէ Աստուած օրեր տայ նմա ապրելու:

Մեք այսպիսաբար խրախուսուելով ամենայն կողմից ստացուած նամակներով, և տեսանելով ևս՝ որ Փարոսիս Ա. տեարն սիրալիր ընդունելութիւն գտաւ մեր բանիմաց ուսումնական համագիներից, որք յորդորում են զմեզ թէ բանիւ և թէ գրով շարունակել այս հրատարակութիւնը, փութամք ահա 'ի լոյս հանել սորա երկրորդ տեսարը, և քաջայոյս եմք՝ թէ մեր արդոյ բանասէրք պիտի բարեհաճին սիրով ընդունել և գայս:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՀՌՈՄԱՑ ՊԱՊԵՐԻ ՀԵՏ։

Խոստովանելով այն մեծ օգուտը, որ կարող է յառաջանալ մեր Կաթողիկոսաց Հռոմայ պապերի հետ ունեցած թղթակցութեան հրատարակութիւնից, մանաւանդ՝ տեսնելով եւս այն թիւր և սխալական կարծիքների տարածումը նոյն թղթակցութեանց վերայ՝ համարձակ պապական վարդապետներից, անհրաժեշտ պարտականութիւն է ներկայանում այն ամենայն անձանց, որոց ձեռքը անկանում են այն թղթակցութեանց ստուգագիր օրինակքն, հրատարակել զայնս 'ի գիտութիւն բանասիրաց։

Մեր ազգային եկեղեցական պատմութիւնից գիտեմք՝ որ մեր Կաթողիկոսունք շատ անգամ թղթակցութիւն են արած Հռոմայ պապերի հետ։ Եւ գոպիսի Կաթողիկոսաց միջէն յայտնի են.

Յամին 1145. Գրիգոր Գ. կաթ. առ Եւգենիոս Գ. պապ։
» 1184. Գրիգոր Դ. կաթ. առ Լուսիոս Գ. պապ։
» 1199. Գրիգոր Զ. կաթ. առ Իննոկենտիոս Գ. պապ։
» 1216. Յովհաննէս Է. կաթ. առ Ոնորիոս Գ. պապ։

Յամին	1239·	Կոստանդին Ա· կաթ· առ Գրիգոր Թ· պապ։
»	1297·	Գրիգոր Ի· կաթ· առ Սինիբաղիոս պապ։
»	1322·	Կոստանդին Բ· կաթ· առ Յովհաննէս ԻԲ· պապ։
»	1350·	Մխիթար կաթ· առ Կղեմէս Զ· պապ։
»	1563·	Միքայէլ կաթ· առ Պիոս Դ· պապ։
»	1605·	Դաւիթ Ե· կաթ· առ Պօղոս Ե· պապ։
»	1622·	Մելքիսէթ կաթ· առ Գրիգոր ԺԵ· պապ։
»	1623·	» » առ Ուրբանոս Ը· պապ։
»	1629·	
»	1631·	Մովսէս Դ· կաթ· առ Ուրբանոս Ը· պապ։
»	1647·	Փիլիպպոս կաթ· առ Իննոկենտիոս Ժ· պապ։
»	1680·	Յակոբ Դ· կաթ· առ Իննոկենտիոս ԺԱ· պապ։
»	1695·	Նահապետ կաթ· առ Իննոկենտիոս
»	1697·	ԺԲ պապ։
»	1709·	Աղեքսանդր Ա· կաթ· առ Կղեմէս ԺԱ·
»	1711·	պապ։
»	1727·	Կարապետ Դ· կաթ· առ Բենեդիկտոս ԺԳ· պապ։

Եթէ բոլոր այս Կաթողիկոսաց ունեցած թղթակցութեանց վերայ նայիլու լինիմք Զամչեանի, Բժշկեանի, Փափազեանի, Ըստակարեանի և այլոց պապական վարդապետաց աչքով, հարկաւ պիտի հաւանիցուցանեմք՝ թէ այդ թղթակցութեանց նպատակն եղած է ցուցանել Հռոմայ պապերին ոչ միայն բարեկամական սէր և յարգանք, այլ և հպատակութիւն կամ հնազանդութիւն, և ճանաչել զնոսա փոխանորդ Քրիստոսի։ Բայց այդպիսի կարծիքն պապական վարդապետների ոչ միայն սխալ է երևում, այլ և մեծ յանդգնու-

թիւն ընդդէմ ճշմարտութեան, ընդդէմ պատմութեան և ընդդէմ ապացոյցին պատուոյ։ Որ խօսքը ապացուցանում է ակն յանդիման մեր Աղեքսանդր Ա· Կաթողիկոսի թուղթն զրեալ առ Կղեմէս (Գրիգորիոս) ԺԱ· պապն Հռոմայ։

Այս թուղթս, որ մեծ նշանակութիւն ունի պատմութեան համար, ինչպէս մեզ թուի՝ զբուած պիտի լինի երկու անգամ, մի և նոյն բովանդակութեամբ, նախ՝ 'ի 1709 թուին Փետրուարի 25 ին, որպէս գրում է Զամչեան, և յետոյ՝ 'ի 1711 թուին Ապրիլի 16 ին, որպէս նշանակուած է մեր օրինակին մէջ։ Որ այսպիսի կարծիքն ապացուցուում է նոյն ինքն Աղեքսանդր կաթողիկոսի խօսքերովը, որ ասում է· „պատշաճ փարիսք կրկնակի զրել զնամակս և ծանուցանել սուրբ Հօրդ“։ Թէ Զամչեանի յիշատակած 1709 թուականի, և մեր ապացրած այժմ 1711 թուականի թղթոց բովանդակութիւնքն մի և նոյն են՝ ակնհայտ երևում է նոյն ինքն Զամչեանի 'ի մէջ բերած խօսքերից։

Ահա այս է Աղեքսանդր կաթողիկոսի թղթի օրինակն ըստ մեր ձեռագրին։

ԹՈՒՂԹ

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՈՑ

Ա Ռ

ԳԼԷՄԷՆԴՈՍ (ԿԼԵՄԷՍ) ԺԱ. ՊԱՊՆ ՀՌՈՄԱՅ։

Ի գերապետէ և ի գերասկզբնական պատճառէ, Աստուծոյ Հօրէ, ի գերակատար և ի գերածնողէ Որդւոյն բնութենէ իսկակից և անժամանակ Միածին Բանէ, ի գերազանց և ի գերպրակտիկական բղխմանէ Հոգւոյն Ճշմարտէ բնութեան և պատկեալ, բարգաւաճեալ և փառաւորեալ, և նոյն ամենասուրբ երրորդութեամբն պատապարեալ, և նախախնամեալ, և Որդւոյն շնորհաբն ուսուցեալ, հոգեւոր և մարմնաւոր իշխանութեամբ զարդացեալ և շքեղացեալ, Աստուածպետական փառաց հաղորդեալ, տիրելով ծովու և ցամաքի, քաղաքաց և տանաց, հեռաւորաց կղզեաց և մերձաւորաց գաւառաց, յոգնապատիւ և գերահռչակ պատուով մեծարեալ, պետականին ժամանելոյ զահիդ Հռովմայ Տեառնդ Գլեմէնդոսի, երիցս երջանիկ և արեղերական հայրապետիդ։

Մեք Նուաստս ծառայք Քրիստոսի, Տէր Աղեքսանդր ամենայն Հայոց Կաթողիկոս, ի զահս շնորհազարդ և Աստուածակոչ աթոռոյս Էջմիածնի, և որք ընդ քեզ ժառանգաւորք սրբութեանն ուխտի, եպիսկոպոսք, քահանայք, վարդապետք, և ամենայն կղերք եկեղեցւոյ, աղջոյն սիրոյ և սրբութեան մատուցանեմք վեմախոհ սրբութեանդ և որոց ընդ հովանեաւ քոյոյդ թեւոց եկեղեցականաց, միանգամայն և աշխարհականաց, խնդալ ի Տէր, ամէն։

Եւ ընդ Աստուածապարգև և քրիստոսանուէր սղջունիս, ծանուցումն և յայտարարութիւն առնեմք փառաւոր ակրութեանդ քոյ, զի թէպէտ և մեք, վերջացեալք գատանիմք յայսմ ժամանակի ի մարմնաւոր իշխանութենէ, սակայն գձեռն տեսանելով և լսելով քաջատահմութեանն գերապատուութիւն, զուարճացեալ բերկրիմք ի սիրտ և ի հոգի, և գոհութիւն անբաւ, և բիւր օրհնութիւն մատուցանեմք

ամենաթագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որով թագաւորք թագաւորին, հզօրք գրեն զարդարութիւն՝ ըստ իմաստնոյն բանի, և խնդրեմք զի զնոյնն միշտ՝ ամենայն ժամանակաց և պարագայիւք ամենայ խաղաղութեամբ և անդրդուելի կենաց հաստատուն պահեսցէ մինչև 'ի կատար և 'ի ապառումն յաւիտենից այսորիկ, 'ի փառս և 'ի գովեստ Աստուածպետութեանն իւրոյ, յուրախութիւն և 'ի պարծանս ամենայն քրիստոնէից, ամէն։

Եւ արդ՝ արտադրեմք և զայս առաջի գերիշխանական մեծութեան ձերոյ, զի 'ի բնուստ անուստ 'ի սկզբանէ՝ այն է սովորութիւն նախադասութեան գերագոյնութեանդդ, փարդապետս և քարոզս առաքել 'ի չորեքծագեան տիեզերս, որպէս յոլով անգամ տեսաք և տեսանեմք իսկ աչօք մերովք, իբր զի քարոզեսցեն զՔրիստոս Աստուած հաւատոյ և խոստովանիլ, և սովոր գտանել զփրկութիւն հոգւոյ և հաստատիլ թագաւորութեան մեզայ, ըստ սրբազան առաքելոյն Պօղոսի՝ որ ասէ „արդարութիւն հաւատոյ յարդարութիւն, և բերանով խոստովանիլ 'ի փրկութիւն“· քանզի ոչ ուստեք է հաստատեալ ուանդութիւնս այս, եթէ ոչ 'ի նոյն ամենատեսանէն Քրիստոսէ Աստուծոյ, որ 'ի ժամանակս փրկագործ անօրէնութեանն և փառաւոր յարութեանն պատուիրեաց աշակերտաց իւրոց ասելով· „երթայք յաշխարհս ամենայն և քարոզեցէք, որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ, և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի“։

Որ և այսու եղեալ պայմանաւս՝ կրկին նշանս կնքեալ տեսանեմք 'ի բարերար Փրկչէն մերմէ, հաւատ և մկրտութիւն, ընդ որս և կան պարունակեալ ամենայն ատանդութիւնք եկեղեցւոյ, որովք յայտնի ծանուցանին բոլոր խորհրդածութիւնք քրիստոնէից։ Քանզի՝ զի՞նչ է հաւատ, եթէ ոչ յուսացեալց իւրոց հաստատութիւն և յանդիմանութիւն որոց ոչն երևին, ըստ Առաքելոյն· ըստ որոյ կանոնի պարտիմք հաւատալ 'ի միութիւն ամենազօր և ամենակարող բնութեանն Աստուածութեան, և փառաւորել զերիս անձինս կատարեալս և յատակեալս, Հայր՝ ծնող, և Որդի՝ ծնեալ Հայրական, որպէս բան 'ի մտաց, և սուրբ Հոգի՝ բղխումն 'ի Հօրէ, անքննելի և անիմանալի, որոյ ոչ մեծութիւն և ոչ նուազութիւն, այլ զուգավասս և համապատիւ, համակամ՝ համիշխան՝ համակար՝ համագործ և

Համազօր, անհայտ՝ անորոշ և անբաժանելի, վերացեալ՝ բարձրացեալ՝ ժամանակաց և յաւիտենից, անսխալան և անսահման թագաւորութիւն,[22] օրհնեալ յաւիտեան ամէն։

Հաւատամք և ընդ նմին՝ զմին յերից անձնաւորութեանց, զ Բանն և զ Արդին ծնեալ՝ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, անսխալաբար և անժամանակապէս, ոչ յեւոյ և ոչ Լրատեր, այլ՝ ի յաւիտենականն[23] Հօրէ՝ յաւիտենական Արդի, յանժամանակ ծնողէ՝ անժամանակ ծնանող, հանգուցեալ և հաւասար ամենայնիւ, քանզի ոչ էր Հայր երբեմն՝ յորժամ[24] ոչ էր Արդի· այլ որպէս միշտ Հայրն՝ Հայր, և Արդին Արդի։

Նոյնն ի վախճան յաւիտեանցս[25] ծնաւ մարմնով՝ ի սուրբ[26] Կուսէն Մարիամայ, Աստուածն կատարեալ, և նոյն ինքն և մարդ կատարեալ։ Հոգւով և մտաւ, անսրբելի մարդկութեամբ, և անթերի[27] Աստուածութեամբ, եղև մարդ՝ առեալ մարմին ի կնոջէ, և եմուտ ընդ օրինաւք՝ բան Աստուածայնն։ Լաւ զամենայն կիրս մարդկայնին որ ինչ ի բնութեանս[28] էր՝ բաց ի մեղայ, ոչ ծառայելով իրրև զմեզ կրիցն բնականաց· այլ կիրք բնութեանս ծառայեին[29] նմա իբրև Աստուծոյ։ Յաղագս որոյ և հաղորդիւք կամաւորացն, և ակամայքն խոյս առեալ փախչէին ի նմանէ, զարհուրեալք իբրև յԱստուծոյ։ Եւ յետ ամոյ երեսնից գայ ի Յորդանան· մկրտի ի Յովհաննէ, և վկայի յԱստուծոյ Հօրէ՝ Արդի սիրելի՝ Կուսածին մարմնովն, և սուրբ Հոգին ազաւնակերպ իջանէ, յայտնեալ զփառս էակցին· որով և վարի յանապատ փորձիլ ի սատանայէ, և յաղթէ նմա մարմնովն ազամային։ Եւ նոյն ժամայն ժողովէ դաշակերտսն, առնէ նշանս և զօրութիւնս բազումս, հրաշս և զարմանալիս յոլովս։ Ասաւ և ի վախճանի կամաւորութեամբ գայ ի շարչարանս, և յանձն առնու զմահ խաչի, և մարդապէս մեռանի ի վերայ նորա, և յառնէ փառաւք յաւուր երրորդի, և երևի աշակերտացն պէս պէս արուեստիւք յաւուրս քառասուն, հաղորդելով ընդ նոսա հացիւ· և յետ այնորիկ յանդիման աշակերտացն ինքնիշխան զօրութեամբ համբառնայ յերկինս նոյնն մարմնովն՝ որով ծնաւ, խաչեցաւ, մեռաւ և յարեաւ, և նստաւ ընդ աջմէ Հօր, բան կանխատեսութեանն Պաւթի· որ և գալոց է ի դատել զկենդանիս և զմեռեալս· որում՝ Հաւատացեալ սպասեմք, և ակն ունիմք յարութեանն և դատաստանի և հատուցման գործոց։

Բնդ նմին խոստովանիմք զմայրն Յիսուսի՝ Աստուածածին· որպէս և զԱստուածն ծնեալ, և զնոյնն[33]ի խաչ ելեալ, բան Գրիգորի Աստուածաբանին, որ ասէ առ որ զրեալն[32] „եթէ որ զԱրարիամ՝ Աստուածածին ոչ իմանայցէ, հեռի է յԱստուածութենէն· և եթէ խաչելոյն որ երկիր ոչ պատանիցէ, նզովեալ եղիցի“:

Հաւատամք և ի Սուրբ Հոգին Աստուած կատարեալ, ունելով[34] բղխումն մշանջենաւոր առ ի Հօրէ, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յԱռաքեալսն, և էջ ի Յորդանան գեա, և ի սուրբ վերնատունն, Հոգի պեռութեան, Հոգի զօրութեան[35], Հոգի բերանոյ Աստուծոյ, ի նորոյն էութենէ Հօր և Որդւոյ, ոչ արարած, ոչ ծառայ, և ոչ հրամանատու, այլ հրամանատու: Մի զորձ է[36] Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ· որպէս[37] ասաց Փրկիչն աշխարհաց, թէ եա՝ Հայր[38] և Հոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ՝ և ոչ բաժանի, բղխի՝ և ոչ սպառի· և ինքն է Աստուած խնկեալ սիրապէս յամէն յամենայնի:

Հաւատամք և զհամաշխարհական կաթուղիկէ եկեղեցի սուրբ· զմեղութիւն մեզոյ[39] հաստատեալ ի վերայ հիմանն առաքելոյ և մարգարէից և վարդապետաց՝ բան Պօղոսի· „զորս եդ Աստուած յեկեղեցի՝ այս են· նախ՝ զառաքեալս· երկրորդ՝ զմարգարէս· երրորդ՝ զվարդապետս„· և զի լուսաւոր բանիւք Աստուծոյ հաստատեալ մնայ սուրբ եկեղեցի անդրդուելի և անսասանելի յաւիտեանս յաւիտենից: Եւ զի՝ կատարեալ է սա ի վիմէն կենդանութեան, որ է ինքն Քրիստոս Աստուած, բան Պաւղոսի թէ· „իմաստութիւն շինեալ իւր տուն, և կանգնեալ սիւնս եօթն“· այսինքն՝ սուրբ եկեղեցի· և խորհուրդք եօթն տանդեալ[40] ի նմա: Դախ՝ մկրտութիւն· երկրորդ՝ դրոշմ· երրորդ՝ ապաշխարութիւն· չորրորդ՝ հաղորդութիւն· հինգերորդ՝ կարգ քահանայութեան· վեցերորդ՝ պսակ· եօթներորդ՝ օծումն վերջին· զոր առնեմք առանց յաւելուածոյ և պակասութեան:

Բանզի մկրտութիւնն է սկզբնական[41] ներածութիւն առ Աստուծոյ բնտանութիւն, և յերկնային ժառանգութիւն· թարց որոց ոչ զի մոռանէ յաբրայութիւնն երկնից· բան Տէրունեան վճռոյն: Եւ զրոշմ[42], որ է կնիք լուսաւոր մկրտութեանն և Քրիստոսական հաւատոյն, և տարանջատող յանհաւատից, որ առնէ զմեզ քրիստոնեայս, և Քրիստոս

ունօղս, և խաչանիշ կնքուն երևիմք ահաւոր սատանայի և հրեշտակաց նորա։ Ապաշխարութիւնն հանդերձ խոստովանութեամբ, ապայ մեզ յոյս թողութեան, որով գտանեմք փրկութիւն հոգւոյ, և արձակումն ի կապանաց մեղաց, բան Տեառն բանի թէ „զոր արձակեաք յերկրի եղեցի արձակեալ յերկին“, և զարձեալ „եթէ ունիք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա“. և զարձեալ՝ „ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից“։ Դաւ հայրդութիւն մնրմնոյ և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի առնել զմեզ հաղորդս Աստուածութեան իւրոյ, բան ասելոյն թէ „ամենայն որ ուտէ զմարմին իմ, և բմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի, և ես ի նմա“։ Եւ զարձեալ „որպէս առաքեաց զիս կենդանին Հայր՝ և ես կենդանի եմ վասն Հօր, և որ ուտէն զիս, և նա՝ կեցցէ վասն իմ“։ Եւ մեք այսոյսով ճաշակեմք զմարմին և զարիւն Որդւոյն Աստուծոյ։ Այլ և կարգս քահանայութեան բնկալաք ի Քրիստոսէ և յԱռաքելոյ, և ունիմք ամենայն ճշմարտութեամբ, զի ձեռն եդ ի վերայ գլխոց նոցա, և օրհնեաց զնոսա. որով եղեն կատարելք և կատարելագործք, բան որոյն Դիոնէսիոսի թէ՝ „պարտիմք նախ մաքրիլ՝ և մաքրել, լուսաւորիլ՝ և լուսաւորել, կատարելագործիլ՝ և կատարելագործել“, որպէս ասանդեցաւ Առաքելոյն որոյ, զոր և ունիմք անշեղապէս, և անսայթաք ընթանամք ընդ շաւիղս նոցա. նախ՝ առնուլ դձեռնադրութիւն, և ապա տալ այլոց, յաւաչ կատարելագործիլ, և ապա կատարելագործել. որպէս և է իսկ ճշմարիտ և հաստատուն։ Եւ պատկն է խորհուրդ մեծ և պանծալի, բան Պօղոսի. „խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ՝ ի Քրիստոս և յեկեղեցի“։ Եւ թէ „պատուական է ամուսնութիւն և տուրբ է անկողին“։ Եւ թէ՝ „Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ“. քանզի սա է պատուական զուգաւորութիւն, առանց որոյ շատն կոչին որբ՝ ընդ այլսմ զուգին։ Եւ օծումն վերջին է, որ զօրացուցանէ զմեզ մատանել՝ ի հանդէս ընդդէմ աշխարհակալին խաւարի, առ ի ըմբշամարիլ ընդդէմ դասուցին. և առնուլ զպատկն յարմանակի, ասանդեալ մեզ ի որբոց Առաքելոյ, բան ասեաւարանականն վարդապետութեան թէ „օծանեալին զբազում հիւանդս“. ուստի նոյն իւղ օրհնութեան կատարի յեկեղեցիս Հայաստանեայց՝ և օծանին ամենայն հիւանդացեալք հոգ-

ւով և մարմնով· որով և ունիմք յոյս առողջութեան հոգ-
ւոյ և մարմնոյ, և փարատումն ամենայն ախտից։ Եւ և այլ
յոգունք աւանդութիւնք մատաւորք, կարգեալք Եկեղեցի
մեր· եթէ՝ ի ծոնս տերունականս, և սրբոյն Աստուծոյ, և
թէ՝ ի պահս և յաղօթս՝ և ի աքսորութիւնս զիշերային հրամ-
ման· և թէ յանարատութիւնս ժամանակաց, և ի կարգա-
ւորութիւնս, զորս թողաք, զի մի լիցի ձանձրութիւն ընթեր-
ցողաց, և մանաւանդ գրեալքս՝ ոչ բան բոլորին, և ոչ բան
պատշաճին զրեցան, այլ բան մասին սակաւակի բանիւք,
թողլով ապատան՝ ի ձեր զերակատար իմաստութիւնն
չափել մատամբ զբոլորն· և յայս հաւատացեալ՝ միրաիմք·
և ակն ունիմք հոգւոյն կենդանութեան, և մերոյին փրկու-
թեան՝ բան անսուտ խոստմանն Ցեառն թէ՝ „որ հաւատայ
և մկրտի՝ կեցցէ"։ Դարձեալ՝ ի կարգ անդր՝ ի վեր եղանելով՝
ասեմք, թէ որովհետև ունիմք մեք հաւատ և մկրտութիւն·
քարոզիչքն աստուածիկ նախատացեալք, ոչ պարտին աշխատ
լինիլ՝ տոս մեզ, այլ առաւել առ այնոսիկ՝ որք ոչ կարդան
զտնուն Ցեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ոչ խոստա-
վանին զնա՝ Աստուած, և ոչ՝ ի անօրէնութիւն նորա հա-
ւատան, և ոչ ունին զՔրիստոսական՝ հինիք յանձինս իւրեանց·
և ոչ ճանաչեն զտարհուրդս եկեղեցւոյ, և ոչ ընդունին
զաստուածաշունչ գիրս՝ զհին և զնոր կտակարանս, և ոչ
զիտեն զանուն առաքելոց և մարգարէից և վարդապետաց,
և ծիծաղեն՝ ի վերայ անհաս խորհրդոյ Քրիստոնէիցս, և
զառանցանս վարկանին զպաշտելի զառանութիւն Քրիստո-
նէից, որ առ ամենասուրբ երրորդութիւնն, և՝ ի անօրէնու-
թիւնան միածնի որդւոյն, և՝ ի սուրբ Կոյսն Մարիամ Աստու-
ածածնէն, և՝ ի պարծանս Քրիստոնէից՝ ի սուրբ և՝ ի կեն-
սակիր և յամենազօր խաչն, և՝ ի պատկերս տերունականս
և ամենայն սրբոց· զորս փութս համարեն, ասելով զբրիս-
տոնեայս իբրև զմոլորեալս։ Նոքա զայս ամենայն տեսա-
նելով և լսելով ոչ ինչ համարեն, և ոչ ցաւ է նոցա· այլ
անփոյթ ունելով կենսա, զմեզ շրջապատեալ պաշարեն,
յարկանել՝ ի մէջ Քրիստոնէիցս ապտակ խռովութեան· և
փոխանակ շինութեան և հաստատութեան՝ արկանեն յոլով
գայթակղութիւնս, ասելով միշտ յականջս մեր կատարից և
անխարհուրդ արանց, թէ ոչ է պատարագն ձեր՝ պատարագ,
և մկրտութիւնն՝ մկրտութիւն· նոյնպէս և խոստովանու-

թիւնն և ապաշխարութիւնն և այլ խորհուրդք· յորոց բանից նեցուկ առեալ թուլամտութիւնք՝ յոդոգոյդք և անհաստատունքն, ելանեն 'ի հաւատոց· և այլ բազումս առնեն անկարգութիւնս ընդդէմ կանոնաց եկեղեցւոյ, յուծանելով զդպահս, և դարձեն բազում՝ զանազան չարիս, (զորս ոչ կարեմք արկանել ընդ գրով), ասելով թէ՝ որովհետև սուտ է կրօնքս քրիստոնէից, որպէս և նոքա ասեն՝ տրտսցին զենչ և հաճեսցին սիրաք ձեր". որով հայհոյի անուանն Աստուծոյ և վարդապետութիւնն 'ի մէջ հեթանոսաց: Ահա այս է պատուղ նոցին արդեանցն· և զի սատուգագոյնս ասասցուք, մեք՝ որ բնակեալ եմք 'ի միջի այսպիսի ազգաց, որ ոչ հաւատան զՔրիստոս Աստուած, և զպաշտօնեայսն Քրիստոսի, ոչ ինչ իւիք զգուեցուցանեն զմեզ կամ տուս ապեցուցանեն, այլ մանաւանդ կան ընդ մեզ խաղաղութեամբ և սիրով յաւէտ ևս, զի յոլով անգամ ընդդիմաբանեմք ընդ նոսա, և վիճեմք յաղագս Աստուածութեանն Քրիստոսի, և օրինաց նորա· լինիմք ջատագովք քրիստոնէական կրօնիս, ոչ բմբոստանան մեզ· այլ միամտութեամբ ակն ածեն զմեզ, ընդ որոց թագաւորի իշխանութեամբն մակաղիմք և մեք· ասացէ ամենասուրբ թագաւորն Աստուած՝ հաստատութիւն թագաւորութեանն իւրոյ· որոյ վասն և մեք աղօթս ձիգս և յաւէժս մատուցանեմք, ըստ խրատու մեծին Պօղոսի, զի այնպէս հանդարտութեամբ վարեմք զկեանս մեր· որպէս և յաւուրս թագաւորացն մերոց, մինչ իշխանութիւնն մեր էր· և սա որ՝ այլազգի, և ոչ պաշտօնեայ քրիստոնէութեանն հաւատոց խորհրդոյ, այսպէս զթարով զթայ և նախանձամեալ պահպանէ զմեզ թարոյ զգուանաց: Իսկ առ մեզ եկեալ պատրիքն ոչ այսպէս, այլ ներհակութեամբ վարին ընդ մեզ՝ խաչնդակն ելենելով· և յորժամ ներհակիմք անկարգ արարմանց նոցին, զուր և ունայն բանիւք ամբաստան լինին առ մեծութիւն ձեր, և դաւանանփորձ զոլով՝ նոցին բանիցն հաւատայք· քանզի 'ի մէջ այլասեռից զՀայս հերձուածօս և հերետիկոս անուանեն:

Աւդ՝ բան վերոյդրեալ դաւանութեանցն, եթէ մեծապատուութիւն քոյ՝ զՀայքս հերետիկոս դատապարտես, եղիցին կամք քո վեհափառութեանդ օրհնեալ· իսկ եթէ ոչ՝ խնդրեմք լամենապատիւ հօրէդ, որ այսպիսեացն սատապառնալեանց գրես, որ դադարին յայսպիսի սխալութենէ:

Եւ զի սրբազան անուան տեսանող ոչ է փայլուչ այսպիսի
իրակութիւն, եթէ փառս յաւոյ և սիրոյն Քրիստոսի զայր
շնորհմեզ առնիցես՝ ըստ Հայրաբնամ՝ զԹոյդ, զնոցա
Թուղթն առաքեա՛ ի ձեռս մեր· և մեր ընկալեալ զայն
իբրև զԱստուածատուր պատգամ Մովսէսի՝ ցուցցուք պատ-
ուեաց, թերևս ոսկաւ մի կասեցին յատկութենէ Քրիստո-
նէից, և տերդ մեր ընկալցիս վարձս ի փարձատուողէն բոլո-
ր ազգացոց: Զանս հնարհել մաղթեմ՝ զեկեղեցի Հայոց որ ի
Վենետիկ, քանզի ողորմելի ազգն Հայոց որք անդր՝ են
առանց հաղորդութեան և ամենայն խորհրդոց: Գարձեալ՝
որովհետև յաջողութեամբն Աստուծոյ միջնորդն խաղաղա-
թեան և սիրոյ՝ բարեպաշտ և Աստուածասէր առաքեալդ
ի մեծութենէդ Խոսրայէ անուամբ դեսպանս եկն Եհան՝ի
Քրիստոսասէջ ամենաս· պատշաճ վարկաք կրկնակի գրել
զնամակս, և ծանուցանել սուրբ հօրդ զաղէտս տարակու-
սանաց մերոց, զի թերևս գայցուք ի սրբութենէդ և ի փա-
ռաւոր մեծութենէդ ափսանս միսիթարութեանց վասն-
գեալ սրտից մերոց: Եւ ոչ այսչափս միայն՝ զորս գրոշմեցաք
ի քարտիզն ասա՛ էնչ բանք յոյժ և խորհուրդք
բազումք· զորս՝ գերանոյ բանիս պատմելոյ է դեսպանս մեր
փառաւոր տերութենդ քոյ:

Եւ պետական դրութիւն և հասարակաց քրիստոնէից անվախ
ախոյանդ, և անշիջանելի ջահդ կամ՝ ողեկն և առաքելական
սուրբ եկեղեցոյ, կացցես և մնասցես ողջ և առողջ ի փառս
մեծադոյնի Աստուծոյ, և ի պարծանս եկեղեցոյ ամէն:

Գրեցաւ ՌՃԿԹ թուին· Ապրիլի ԺԳ, ի դուռն սուրբ
ամենայնս Էջմիածնի:

Արժան է ասել, սիրելի միաբնակ եղբարցս յուշ արկա-
նել դայս ինչ, զի յորժամ գիրս այս առաքեցաք ի սրբազան
կամ՝ողեկոսէս մերմէ ի Հռոմ, ձեռամբ ուրումն Թովմաս
եպիսկոպոսի· որոյ եկեալ անդանօր, ոչ թողին զաս ելանել
մտանել առ Պապն, և տալ ընծայել զԹուղթն· այլ յուրեք
իբրև ապաշուք ամն, ժամանակս ձիգս յամեցուցանէին զա-
նազան պատճառս արգելմանն ասալոգելով, և չէն ինչ
զարմանք այսպիսի արարողութիւնք նոցին: Բայց ի վերջն
յետ ընդ երկար յամելոյն Թովմաս եպիսկոպոսին անդանօր,

իբրև յայնմ ժամանակի զայ հասանել լոր օրհասի, և յաղ-
ցաւորկ ասաի յանուանցն վերաթուչելոյն՝ վերոյ գրեալ սրբա-
զան Կաթողիկոսիս մերոյ. և յայլքան երկար սպասմանէն,
ուշ ինչ օգտեալ Թովմաս եպիսկոպոսին, զանելաբար ի Հռովմ
երեալ դիմի ՅԱՄԱՍԳԵՐԱՄ՝ քաղաք, ըստ խրատու տրուն
որ նմա հաւատաեալ էր, եթէ այլ ևս յամիս ասասնօր,
անհետ զքեզ առնեն։ Եւ իբրև ժամանեալ ի յիշեալ քա-
ղաքն, ասասանօր զոյր կառուցեալ հոյակապ եկեղեցի Հայոց.
զոր յանուն ամենասուրբ Հոգւոյն նուիրեալ՝ օծանել մեծա-
հանդիսիւ. և այս իսկ ըստ Ցեառն յայտնելոյն։ Արդ՝ զօրի-
նակ գրոյս, ինքն Թովմաս եպիսկոպոսն առեալ էր Աղբոյեան
Պետրոս ազգին, որ էր յայնժամ ՅԱՄԱՍԳԵՐԱՄ՝ քաղաքի,
որ այժմ իսկ ի նորին հանգուցելոյ որդւոյն, այսինքն ի
Պարսուսա և ՅԱՌԱՔԵԼ ամիրայիս, մեզ շնորհեալ եկն. որ
և ըստ խնդրոյ տիրացու Ա.եսիսի սիրելոյն իմոյ օրինակեցաւ
ի Սիմէոն սարկաւագէս Հարազատաբար։

Իսկ ի թվին Հայոց ՌՄԽ, յերկրորդական գարձարանն
օրինակեցաւ ի Գրիգորի Շիշմանեանն։

Եւ իսկ ի թուին Հայոց ՌՄԽԹ յերրորդական գարձա-
բանն օրինակեցաւ ի Միքայել Դաղարեթի Մարեան։

Միքայել վ. Ղամշեան ի Պատմութեան, Հայ. (Հատ. Գ. էջ 749 — 750), մի Աղեքսանդր Կաթողիկոսի այս թուղթը յիշատակելու ժամանակ՝ ասում է.

„Սա ինքն Աղեքսանդր յառաջ քան զնստիլ իւր յաթոռ
Հայրապետութեան՝ ունէր ընդդիմութիւն առ քաղկեդո-
նականս և առ աթոռն Հռովմայ. և գրեալ իսկ էր դիրք
մի փաքրիկ հակառակ բանիւք... Այլ յորժամ նստաւ Աղե-
քսանդր յաթոռս կաթողիկոսութեան՝ ի բաց եթող զա-
ռաջին ընդդիմութիւն իւր, և կարաւ սեր մեծ ընդ առաքե-
լական գահին Հռովմայ. և եղոյց պատիւ լաւին կրօնաւորաց՝

որք Հանդիպեցան Էջմիածին· և զկնի սակաւուց՝ յամի 1709· ՌՃԾԸ· ի փետրվարի 25· յղեաց դիր սիրոյ և յարգութեան առ սրբազան պապն Կղեմէս մեռաւանեռորդ ի դիմաց իւրոց և ի դիմաց ՀամՕրէն վարդապետաց և բոմանզակ Հօտին իւրոյ· յորում՝ ընդունելով զՀռոմմայ Հայրապետան լինել փոխանորդ Քրիստոսի և յաջորդ Պետրոսի միմի՝ անուանէ զնա երիցս երջանիկ սիեզերական Հայրապետ, և պետական զուսի· գերիշխանական մեծութիւն, և զերագոյն նախագահութիւն· Հայր Հաստատակաց քրիստոնէից, և անշիջանելի ջահ կամուղեկ և առաքելական եկեղեցոյ։ Եւ առաջի եդեալ զսեր իւր և զիւրայոյն առ սրբազան զահն Հռոմմայ, խնդրէ՝ զի ըստ Հայրական՝ զմոյն արժանի արասցէ առաքել զիսնադարձ պատասխանի յամենն սրբոյ Էջմիածնի· և մեք ասէ ընկալցուք զմեղմ ձեր իրրև զԱստուածատուր պատգամն Աստուծոյ։

„Եւ սրբազան Պապն Կղեմէս գրեաց ի յաջորդ ամի ի Մարտի 15 պատասխանի սիրով առ կամուղեկոսն· և ընդ թղթոյն առաքեաց զնամակ դատանութեան՝ ստորագրել այնմ՝։ Որոնցոր Հարեանցիկ դիտել արժան է, զի Ղազար ՅԱՀկեցին ասէ ի գիրան իւր· յերես 606· թէ Աղեքսանդր կամուղեկոս գրեալ իցէ „թուղթ ընդդիմութեան առ Կղեմենդոս փափն Հռօմայ"։ Եւ սակայն Յակոբ Վէլոդ՝ որ թարգմանեաց զայն թուղթ, յայտնի վկայէ՝ թէ այն էր ուղղափառական և սիրալրական, և ՈՉ դիմադրական· զնոյն վկայէ և սիրացու Մաղաքիա ժամանակակից, թէ „գրեաց թուղթս սիրոյ առ Կղեմէնդ պապն"։

Լսակ իւր Խրատնման պատմութեան Հայոց գրքին մէջ (յէջ 454) նոյն թղթի մասին գրում է·

„Եւ յորժամ (Աղեքսանդր) նստաւ յաթոռս կամուղիկոսութեան՝ ի բաց եթող զառաջին ընդդիմութիւն իւր, և կարաւ սէր մեծ ընդ առաքելական աթոռոյն· և գրեաց ևս գիր հպատակութեան առ սրբազան պապն Կղեմէս մեռաւանեռորդ ի դիմաց իւրոց, և ի դիմաց վարդապետաց ՀամՕրէն և ազգին Համայն"։

Այնպէս և Մինաս վ. Բժշկեան 'ի Սրբազան Պատմութեան (հատոր Բ. էջ 461), խօսում է նոյն թղթի վերայ, յայտ է՝ թէ կրկնելով Չամչեանի բանը, այսպէս.

„Յետոյ 'ի 1709 (կղեմէս ԺԱ) ընկալեալ զգիր սիրոյ և հպատակութեան Աղէքսանդրէ կաթողիկոսէ՝ գրեաց զպատասխանին 'ի յաջորդ ամի նոմին հայրապետամ՝ սիրով"։

Իսկ Իգնատիոս վ. Փափազեանց յԵրկեղեցական պատմ. (յէջ 933), գրում է Աղէքսանդր Կաթողիկոսի համար՝ թէ.

„Գրեաց նամակ հպատակութեան և սիրոյ առ քահանայապետն Կղեմէս ԺԱ. 'ի դիմաց համօրէն ազգին"։

Ահա այսպէս մեր Աղէքսանդր Կաթողիկոսի վերևում տպեալ հայրենասիրական ոգով գրուած ամբասանական թուղթն առ Կղեմէս պապն Հռոմայ՝ նորանից ուղարկուած քարոզիչների գայթակղական և անիրաւ գործոց համար, Մ. Չամչեանի, Մ. Բժշկեանի, Եւ և Ի. Փափազեանցի կարծիքով՝ է զիր հպատակութեան, զիր սիրոյ և յարգութեան։ Բայց արդեօք այդպէս է։

Ուշադրութեամբ կարդալով այդ թուղթը, ընդ հակառակն, մեք տեսանում ենք՝ որ 'ի մի կողմանէ թէպէտ և յայտնուում է նորա մէջ սէր, բայց 'ի միւս կողմանէ յոյժ հեռի է 'ի հպատակութենէ։ Սէր, յարգութիւն և հպատակութիւն բառերն, համանշանակ բառեր չեն։

Եթէ կաթողիկոսի զրաՃն լինէր եւ գիր յարգութեան, չէր կարող լինել գիր հպատակութեան, ըստ որում այլ է յարգելն, եւ այլ՝ հպատակելն։ Սիրել եւ յարգել զիմեանս՝ կարող են եւ պարտին եւ ոչ միայն կաթողիկոսք եւ պապք, այլ եւ ամենայն քրիստոնեայք· բայց յայս պարտականութիւնից չէ ծագում պապականների քարոզած հպատակութեան պարտականութիւնն։ Որ առողջամիտ մարդ կարող է համարձակիլ ասելու՝ թէ „Թադէոս սիրում է եւ յարգում զՊետրոս, ուրեմն պարտական է հպատակելու կամ հնազանդելու նմա“։ Կամ ընդհակառակն՝ „Պետրոս չէ հպատակում Թադէոսի· ուրեմն անարգում է զնա կամ թէ չունի սէր առ նա“։ Այսպիսի հեռուութեանց թիւր լինելն՝ ապացոյցի կարօտ չէ։ Ուստի եւ մեք չեմք կարող Աղեքսանդր Կաթողիկոսի թղթին այնպիսի նշանակութիւն եւ իմաստ տալ, որպիսի տուած են Մխիթարեանք։ Յիրաւի, յոյժ զարմանալի եւ միանգամայն անհասկանալի է զոյա այս գործումն բռնած ճանապարհն, այսինքն՝ ըստ իւրեանց քմաց՝ բանին այլապէս մեկնութիւն տալն։ Այդ թուղթդ նշանախնդի չափով անգամ չունի հպատակութեան գիր լինելոյ հետք կամ նշան, եւ չգիտեմք ուստի՞ հեռեւցուցանում են համազգի պապական վարդապետքն՝ թէ Աղեքսանդր Կաթողիկոսն ճանաչած է զՀռոմայ պապը գլխաւորք Քրիստոսի։

Ընդհակառակն, այդ թուղթդ, որպէս արդէն ասացինք, է իսկապէս թուղթ գանգապառնաց և իրաւացի Էողոփառնաց ընդդէմ Պատրեաց (Հռովմէական քարոզիչներին), և ոչ թէ դիր հպատակութեան։ Իսկ եթէ նորա մէջ գտանուում են շքեղ և գերազրական ածականներ 'ի ցոյց պապի արտաքին պատուոյն կամ աշխարհական իշխանութեանն, որպիսի են՝ „Պետական Գլուխ, Հասարակաց քրիստոնէից անվախ Ուխտյան, անշեջանելի Ջահ, երիցս երջանիկ և տիեզերական Հայրապետ“ *) և այլն, որովք պերճանում էր նա թմրեալ դարերում, այդ լոկ քաղաքավարութեան նշան է, և ոչ թէ հպատակութեան։ Ու ի՞նչ նշանակութիւն կարող են ունենալ Զամչեանի 'ի մէջ բերած քանի մի՝ նոյն ժամանակում սովորական եղած ածականներն՝ առանց նամակագրի բուն դիտաւորութեան և իսկական ոգւոյն՝ որ բացափայլ երևում է թղթի բովանդակութեանը մէջ։ Ագիքսանդր Կաթողիկոսն ասում է. „Ու զի սրբազան անուան Տեառնդ ոչ է վայելուչ այնպիսի իրակութիւն, եթէ վասն յուսոյ և սիրոյն Քրիստոսի զայդ շնորհ մեզ առնիցես՝ ըստ

*) Ալոպիսի փաքալից ուռուցիկ թռուցիկ անխորհուրդ ածականների և տիտղոսների վերայ, դորս բարձրատաքման եկեղեցականք սեպհականացուցած են ինքեանց հետ գնեալ, կարելի էր այժմ շատ բան գրել, եթէ դէպ ժամանակն հասած լինէր։

հայրախնամ զԹոյլ զնոցա (քարոզչաց) թուղթն առաքեան 'ի ձեռս մեր· և մեր ընկալեալ զայն իբրև զԱստուածատուր պատգամ Մովսիսի՝ ցուցցուք պատրեաց, թերևս սակաւ մի կասեսցին յատելութենէ քրիստոնէից": Իսկ Զամչեանն նոյն բանի իմաստը փոխելով՝ ասում է· „Եւ առաջի եղեալ զսէր իւր և զնուրոյոյն առ սրբազան գահն Հռովմայ, խնդրէ՝ զի ըստ հայրախնամ զԹոյն արժանի արասցէ առաքել զփոխադարձ պատասխանի յաթոռն սոյ Եկեղեցեաց· և մեք ասէ ընկալցուք զԹուղթ ձեր իբրև զԱստուածատուր պատգամ Մովսիսի": Բառերն՝ զրեթէ ըստ մեծի մասին՝ նոյն են, բայց իմաստն ևս նոյն է արդեօք:—Ոչ· այլ՝ օտար ըստ ամենայնի, և այնչափ հեռի բուն գրուածի իմաստէն, որչափ հեռի է Հռոմ Եկեղեցիէն: „Ցուցցուք պատրեաց, ասում է կաթողիկոսն պապին՝ խնդրած գրոյն համար, (զի նոքա, պատրիարքն, տեսեալ զայն) թերևս սակաւ մի կասեսցին յատելութենէ Քրիստոնէից (Հայոց, որք քրիստոնեայ են, և որոց գաւանութիւնը նա պնում է իւր Թղթին մէջ)"· իսկ Զամչեանն՝ նոր կերպարանք տալով բանին՝ որով և նոր իմաստ, այսպէս է գրում· „Եւ մեք (Աղեքսանդր կաթողիկոս) ընկալցուք զԹուղթ ձեր (պապի) իբրև զԱստուածատուր պատգամ Մովսիսի": Աղեքսանդր Կաթողիկոսին հարկ չկայր ամենևին

պատգամներ խնդրել պապէն՝ ոչ իւր համար, և ոչ իւր հօրին համար. և նորա խնդրածն ոչ այլ ինչ է, եթէ ոչ Ղ-ՂԻ ՅԱՆԴԻՄԱՌՈՒԵԱՆ պատրեաց վերայ, որպէս յայտնի երևում է և նախընթաց բանէն. „Խնդրեմք, ասում է նա, յամենապատիւ Հօրէդ՝ որ այսպիսեացն սատա սպառնալեաց գրես, որ դադարին յայսպիսի ոխակալութենէ“. և կամենում է, որ այն թուղթն լինի սատաղական՝ սպառնալից Մովսիսեան պատգամների նման, որպէս զի պատրիքն վախենալով՝ դադարին ոխակալութիւնից:

Ղամչեանն իւր պատմութեան մէջ (Հ. Գ. էջ 730) յեռ ասելոյ՝ թէ „Յակոբ Վիլլոդ, Լատին կրօնաւոր 'ի կարգէ Յիսուսեանց, որ ունէր փոքր մի տեղեկութիւն Հայկական լեզուի, թարգմանեաց 'ի Լատին զթուղթ (Աղեքսանդր) Կաթողիկոսին՝ թէպէտ և ոչ հարազատ իմացուածով“, կամելով անստոյգ կարծեցուցանել Գաղար Կաթողիկոսի գրածը՝ թէ Աղեքսանդր Կաթողիկոս գրեաց „թուղթ ընդդիմութեան առ Կղէմէնդոս փապն Հռոմայ“, յաւելացնում է. „և սակայն Յակոբ Վիլլոդ՝ որ թարգմանեաց զայն թուղթ, յայտնի վկայէ՝ թէ այն էր ուղղափառական և սիրալրական, և ոչ դիմադրական“: Յոյժ զարմանալի է՝ թէ ինչպէս Ղամչեանն հաստատագոյն է համարում այն թարգմանչի վկայութիւնը՝ որ չէ կարողացած հարազատ իմա-

յուածով թարգմանել կաթողիկոսի թուղթը։ Ընդհակառակն՝ Պաղար Ջահկեցոյ վկայութիւնն առաւել արժանահաւատալի է թուում մեզ· իսկ Պիլոյի գրածն՝ անհարազատ իմացուածով բան։

Ղամչեանն ասում է գարձեալ՝ թէ „պապն Պղեմէս գրեաց 'ի յաջորդ ամի պատասխանի սկզբով առ Կաթողիկոսն“, թէև պատասխանուցն օրինակը չէ գտնում։ Իսկ Սիմէոն սարկաւագի խօսքին նայելով՝ Թովմաս եպիսկոպոսն, որ եկած էր 'ի Հռոմ Աղեքսանդր Կաթողիկոսի թղթով, ոչ միայն պապին ներկայացած չէ, այլ և երկար ժամանակ անօգուտ յուսով մնալով քաղաքին մէջ՝ ենթարկուած է եղած վտանգի և փորձանաց, ուստի „ըստ խրատու ուրումն՝ որ նմա հաւատեալ էր, եթէ այլ ևս յամես ատտանօր, անհետ զքեզ առնեն“, հարկադրուեցաւ ելանել ծածկարար Հռովմէն և գնալ Յունդերատամ։ Եթէ ստոյգ է Ղամչեանի ասածն, պէտք է ուրիմն որ պապի պատասխանագրոյն թէ լատինական բնագիրն և թէ հայերէն թարգմանութիւնն գտանուին Էջմիածնի կաթողիկոսական գիւանատան մէջ· վասն զի հաւաստեաւ յայտնի է, ըստ աւանդութեան ծերունի եպիսկոպոսաց, թէ Սիմէոն Կաթողիկոսն՝ իւր նախորդաց թէ առ այլս գրուած կոնդակների, և թէ այլոց առ նոսա գրուած թղթերի հաւաքում է արած մի ըն-

դարձակ մասնի մէջ, և միջոցն ժամանակի, որպէս պատմութիւնն ցուցանում է, Աղեքսանդր Կաթողիկոսի մահուանէն մինչև ցՍիմէոնի կաթողիկոս նստիլն՝ չէ աւելի քան զ48 տարի։ Համեմատելով Զամչեանի տասնը՝ Սիմէոն սարկաւագի խօսքերին հետ, և 'ի միտ առնելով նոյն իսկ Աղեքսանդր Կաթողիկոսի տեսլը՝ թէ որովհետև „բարեպաշտ և Աստուածասէր առաքեալդ 'ի մեծութենէդ Իսրայէլ անուամբ դեսպանս եկն ետես 'ի Երուսաղեմէ աթոռս, պատշաճ վարկաք ելանել դիմել դիմաց և ծանուցանել սուրբ Հոգի“, ևս և ուշ դնելով նոյն ժամանակի մեր եկեղեցական պատմութեան՝ հաստատապէս կարելի է՝ որպէս թղթիս ուղարկուելոյն, նոյնպէս և նորա գրուելոյն մասին, ասել զայս, թէ Աղեքսանդր Կաթողիկոսն գրեց իւր նամակը և ուղարկեց պապին առաջին անգամ 'ի 1709 թուին, բայց առանց մեր եկեղեցւոյ դաւանութեանը, և երկրորդ անգամ 'ի 1711 թուին՝ դաւանութեան հետ, որպէս է մեր օրինակին մէջ, և սորա պատճառն այս է։ Պապն Կղեմէս՝ յետ ստացման թղթի 1709 թուականի, 'ի յաջորդ ամի, որպէս գրում է Զամչեանն, պատասխան է ուղարկում Կաթողիկոսին՝ իւր դեսպան Իսրայէլ եպիսկոպոսի ձեռամբ, խնդրելով Կաթողիկոսից, որ նա ստորագրէ պատասխանագրին հետ ուղարկուած „Դաւանութեան նամակը“։ Ի-

ինչպէս երևում է Աղեքսանդր Կաթողիկոսն յանձնառու չէ եղած ուղարկուած դաւանութիւնը ստորագրելու, և հարկադրուած է կրկին գրել, այն է 'ի 1711 թուին, իւր առաջին թուղթը՝ յաւելացնելով նորա մէջ և մեր եկեղեցւոյ դաւանութիւնը, և առաքել 'ի Հռոմ Թովմաս եպիսկոպոսի ձեռքով: Բայց որովհետև պապի դեսպանն, Թովմաս եպիսկոպոսի 'ի Հռոմ հասանելուց յառաջ, իմացուցած պիտի լինէր պապին՝ իրողութիւնը, յայտնապէս երևում է՝ թէ ինչքա, Սիմէոն ստրկաւոր պատմածին նայելով՝ Թովմաս եպիսկոպոսն պապին տեսած չէ, և իւր Կաթողիկոսի թուղթը մատուցանել կարողացած չէ: Ահա այսպէս ակն յայտնի երևում է այժմ՝ թէ պապն ինչքա չէ ընդունած զԹովմաս եպիսկոպոսը, և թէ ինչքա նա չէ կամեցած տեսանել զդեսպանն այն կաթողիկոսի, որ մերժեց իւր առաջարկութիւնը: Ասածիս ապացոյց կարող է լինել և այն, որ Աղեքսանդր Կաթողիկոսն՝ դաւանութեան մէջ, յիշում է նաև զՀիւանդպաց օծումը որպէս խորհուրդ, որ կատարուում էր երբեմն մեր մէջ որպիսի և իցէ կերպիւ: Միով բանիւ՝ Աղեքսանդր Կաթողիկոսն այնքան զգոյշ է եղած իւր յարակցութեանը մէջ Պապի հետ, որ մեծագոյն գովասանութեան է արժանի: Եւ ինչպէս երևում է, նորա նամակն մեծ ներգործութիւն է ունեցած Հռոմում՝, որ կինի այնորիկ յաջորդ Կաթողիկոս-

ներից մինը միայն, այն է՝ Կարապետ երրորդը տեսանում եմք պապերի հետ հաղորդակցութեան մէջ *), և ապա բոլորովին դադարեալ։ Յիշեալ ներգործութիւնը և թղթակցութեանց իսպառ դադարումը շարունակուում է մինչև ցայսօր։ Եթէ այսպիսի ներգործութիւն ունեցած չլինէր Աղէքսանդր Կաթողիկոսի թուղթն՝ անպատճառ յիշատակուած կտեսանէինք զայն, որպէս յիշատակուած են մեր միւս կաթողիկոսաց նամակներն, Պալճեանի „Ընթռ Սրբոյն Պետրոսի“ վերնագրով մատեանին մէջ, եւ և Ղստակաբեանի „Եկեղեցական Պատմութեան մէջ“։

Ժամեմատելով դարձեալ պապական վարդապետաց կարծիքները Աղէքսանդր Կաթողիկոսի թղթի վերայ, մեք տեսանում եմք՝ թէ միակերպ և համաձայն չեն միմեանց։ Օրինակ՝ Զամչեանն՝ նախ Պատմութեան մէջ, որ տպուած է 'ի 1786 ամի, անուանում է զայն թուղթը գէր ոչրոյ և յարգելոնեան, և յետոյ՝ Խրատեանի մէջ, որ տպուած է 'ի 1811 ամի, գէր հպատակոնեան։ Իսկ Բժշկեանն՝ 'ի Պատմութեան քահանայապետաց Ժառվանոյ, որ տպուած է 'ի

*) Այս Կարապետ Կաթողիկոսի թղթի մասին եւ կարծիքներն՝ Զամչեանի, Բժշկեանի և Փափազեանի միմեանց համաձայն չեն. առաջինն անուանում է զայն նոնոզի յարգելոնեան (հատ. Գ. յէջ 803), երկրորդն՝ նոնոզի ոչրոյ և հպատակոնեան (յէջ 567), իսկ երրորդն՝ նամակ յարգելոնեան և հպատակոնեան (յէջ 934)։

1838 ամի, որպէս և Փափազեանն՝ Եկեղեցական պատմութեան, որ տպուած է 'ի 1848 ամի, տալիս են այս թղթիս Հէր «էրոյ Ե Հպապակո-ՐԷան անուն: Յինչ է ծագում այդպիսի զանազանութիւն կարծեաց՝ մի և նոյն թղթի մասին: Հատատաբար կարելի է ասել այս միայն ասել, թէ որպէս Զամչեանն, նոյնպէս և նորա ձայնակիցքն Բժշկեան և Փափազեան՝ կամ թղթիս օրինակը ամենևին տեսած չեն, և կամ զիտութեամբ ճշմարտութիւնը ուրանում են, և որպէս այս թղթիս, նոյնպէս և այլ սորա նման ամբաստանական նամակներին մեր կաթողիկոսաց, որք գանապան ժամանակ գրուեցան պատերին, չեն տալիս այնպիսի անուն, որով իմացուին նոցա գրուելոյն իսկական պատճառն և նպատակն: Այդպիսի ձև և կերպարան տալն պատմական յիշատակարանաց՝ առհասարակ պապական ոգւոյ արգասիք են: Սոխպուում եմք ցուցուցել խոստովանել, որ այդ պապական կողմնակցութեան ոգին տիրում է մինչև ցայսօր Մխիթարեան միաբանից մէջ, մանաւանդ Վենետիկոյ: Յապացոյց ասածիս՝ կարող եմք ցուցանել Հ· Ղստակարեանի „Եկեղեցական պատմութիւնը" (տպեալ 'ի Վենետիկ 1872 թուին), որոյ վերայ ունիմք խօսել յիւր ժամանակին առանձին յօդուածով: Բայց այժմ զառնամք կրկին 'ի քննութիւն Աղեքսանդր Պատրիարքի թղթին:

Ազգքանդը Կաթողիկոսն իւր թղթին մէջ, յառաջ քան գոյանելն գիւր բողոքը և դանդաղ պատրիարքի վերայ, որք չէին կամենում քրիստոնեայ ճանաչել զՀայերը՝ բերում է մեր եկեղեցւոյ դաւանութիւնը. և զայս առնելով՝ որպէս թէ կամենում է ասել. „տէր՝ իմ եկեղեցւոյ դաւանութիւնն. եթէ սորա մէջ հերետիկոսութիւն գտանես, գատապարտէ զՀայերը իբրև զհերետիկոս. իսկ եթէ չկարողանաս գտանել, ճանաչեր զնս և զնմ ժողովուրդը ուղղափառ քրիստոնեայ, և հրաման՝ պատգամ՝ զրէ քո պատրիարքին, որ նոքա ևս ճանաչին այդպէս, և չվրդովին պատրողական խօսքերով իմ ժողովուրդը“, և այլն: Տէր յոյժ ցաւում եմք, որ չունիմք մեր ձեռքում Զամչեանի յիշած՝ պապի պատասխանագրի օրինակը: Եթէ այն ևս ձեռք բերուի, մեծ գիւտ կլինի ազգային պատմութեան համար:

Թէ ի՞նչ է պատճառն որ Արքազան Հայրապետս մեր խօսելով հաւատոյ դաւանութեան մէջ „Հիւանդոյ (Վերջին անուանեալ) օծման“ վերայ, ցուցանում է այնպէս՝ որպէս թէ կատարուում է այդ խորհուրդդ Հայաստանի մէջ օրհնութեան (օրհնած) իւղով, մինչ անտարակոյս յայտնի է մեր մատենագիրների խօսքերից՝ որ զարերով յառաջ խափանուած էր՝ օծմամբ իւղոյ կատարումն այդ խորհրդոյդ մեր ազգի մէջ՝ վասն իրաւացի պատճառաց, այս մի՞ խնդիր է,

և կարօտի առանձին զգուշաւոր քննութեան, զոր մեք թողում ենք առ այժմ, յուսալով՝ թէ հոգեշնորհ Վ. Վ. Մանկունի՝ յառաջէ քան զմեզ այդ գործը երևեցուցանելու Էջմիածնի Աբբայ ամենազրի մէջ, ուր արդէն սկսած է, նա հրատարակել իւր յօդուածները „ճօթն խորհրդոց“ վերայ։ Մնում է մեզ այս տեղ զայս միայն ասել, թէ սոյն հաւատոյ դաւանութեան մէջ չկայ և ոչինչ հերետիկոսական կամ ընդդէմ ուղղափառութեան։

Հասկանալով և ճանաչելով այն մեծ օգուտը, որ կարող է յառաջ գալ մեր կաթողիկոսաց հին ժամանակներում արած թղթակցութեան ապացուցութիւնից, հիացած և զարմացած ենք՝ թէ ինչպէս Էջմիածնական Աբբայ ամենապիսն առանց ուշադրութեան թողում է այդ գործը, և փոխանակ ծանօթացնելու զուսումնական աշխարհը՝ Աղեքսանդր Կաթողիկոսի թղթի նման գրուածոց, լուցանում է իւր էջերը մանր դասախարակական յօդուածներով, որք տեղի կարող են ունենալ միայն դասագրոց մէջ, ևս և երկար ու բարակ հաշիւներով ծխական գպրոցների և կամ նոր իրաբերութիւնների, որք լիապէս հրատարակմամբ ընդհանուր բոլոր ազգի համար առանձին նշանակութիւն ունենալ կարող չեն, այլ միայն մասնաւոր և տեղային։ Ցաւ է հարկաւոր գիտել՝ թէ այս ինչ կամ այն ինչ քաղաքում,

այս ինչ կամ՝ այն ինչ մարդ՝ այսքան և այնքան նուիրաբերութիւն է արած. այս կարող է ցանկալի լինել միայն նոյն քաղաքի բնակչաց. բայց ազգի ընդհանրութեան՝ բաւական է գիտել գումարը: Բոլորովին այլ նշանակութիւն կարող է ունենալ բուն իսկ Էջմիածնի հաշուոց հրատարակութիւնն. վասն զի ամենեցունց ցանկալի է իմանալ նոյն Ս. Աթոռոյ՝ որ կեդրոն է ընդհանուր Հայոց ազգի եկեղեցական կառավարութեան՝ եկամուտքը. բայց Աչքաչաք այդ հաշիւը չէ հրատարակում, և գուցէ հրատարակել էլ չկամենայ անօգուտ համարելով: Միով բանիւ Աչքաչաք, որ ապահովուած է իւր կենաց մէջ՝ կարող էր առանց դժուարութեան գօրաւոր միջոց լինել ազգային պատմութեան լոյս տուող հնութիւնները ապաղրելով: Հառընտիրներն, Ջամբռներն և մեր նախնի մատենագրաց անարիպ մնացեալ երկասիրութիւնքն՝ որք գտանուում են Էջմիածնի մատենադարանին մէջ, պատրաստ են արդէն այսպիսի օգտակար ձեռնարկութեանց նը-պաստամատոյց լինելու:

Փաչոն իւրեան յոյժ բաղդաւոր է համարում, որ թօթափելով Աղեքսանդր Կաթողիկոսի թղթի վերայից փոշին, մաքրեց զայն, որով և լուսաւորեց մեր կաթողիկոսաց պատմութեան էջերից մինը, որ խաւարած էր Մխիթարեան վերապատուելիների շնորհիւ:

ՈՂԼ ԷՐ ԳԻՈՐԳ ԵՐԲՈՐԴ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ընդհանուր 1872 թուականին Վիեննայում տպուած Հ. Վարդան Վ. Բասկարեանի «Եկեղեցական Պատմութիւն», արժանի է ուշադրութեան որպէս գործ՝ հայերից դուրս պատմական ոգով աշխատասիրուած, և որպէս եղծիչ և ունայնացուցիչ Հայաստանեայց եկեղեցւոյ նուիրական հաստատուն աւանդութեանց։ Մեք միայն ունիմք ժամանակ ժամանակ առանձին յօդուածներով յերևան հանել Փարոսի թերթերում՝ այդ երկասիրութեան մէջ սպրդուած ծանրալուր, անբարոյական և այլանդակ կարծիքները։ բայց առ այժմ բաւական ենք համարում ցուցանել այս տեղ այդ գրքի հեղինակին մի անզգուշութիւնը, կամ լաւ ևս ասել՝ անմտադրութիւնը, որ թէպէտ թեթև և չնչին բան է, բայց կարդացողի աչքին (եթէ հմուտ է նա մեր եկեղեցւոյ պատմութեան) շէյտ է գալիս։

Հ. Բասկարեանն այդ գրքի վերջում գնում է, մեր կաթողիկոսաց ցուցակը, ուր և նոցա յաջորդութիւնը սկսեալ 'ի Ա. Գրիգորէ Լուսաւորչէն՝ հաստատում է, մինչև ցմեր ժամանակը։ Վերջին կաթողիկոս նշանակում է նա ՊՈՂՈՍԵ ՊՈՂՈՍԵԱՆ։ Բայց մեք քննելով նոյն տպու-

ած ցուցակը, գրառանում եմք նորա մէջ միայն էրէ+ կաթողիկոս Գէորգ անուամբ. այն է՝

46· Գէորգ Ա· (792—795)։
51· Գէորգ Բ· (876—897)։
137· Գէորգ Դ· (1866)։

Իսկ Էրզրումի։

Այր ամենայն ժամագրոց վերջումը ապուած ցուցակին (ինչպէս նաև Ղամչեան պատմութեան Կաթողիկոսաց ցուցակին) մէջ գտանում եմք միայն Էրէոս կաթողիկոս՝ Գէորգ անուամբ. ուստի, եթէ այժմեան մեր Վ. Հայոց Գէորգ կաթողիկոսն համարուի ըստ Ղ. Սակարեանի՝ Ազրոյդ, յոյժ ցանկալի է իմանալ՝ թէ ո՞վ էր Էրզրումի, և թէ ո՞ր ժամանակում էր նա։ Ղամչեանն ըստ իմիք իրաւունք ունէր՝ Էրէոս միայն Գէորգ անուամբ կաթողիկոս նշանակել. վասն զի զԳէորգ Ղ. ուսեցին (որ Գրիգոր Բ· Վ. կայասէր կաթողիկոսի կենդանութեան ժամանակ (՝ի 1071 թուին) նենգապատիր խաբէութեամբ՝ նորա աթոռը նստած էր, և ապա յետ իբր 2 տարւոյ առանձին ազգային ժողովոյ վճռով և նոյն իսկ Գրիգորի Վ. կայասիրի հաւանութեամբ խայտառակաբար աթոռընկէց եղած էր) օրինաւոր կաթողիկոս չէ՞ համարում, որպէս ինքն ևս խոստովանում է գրելով. „Երկոքին սոքա, Սարգիս և Թէոդորոս *), ոչ դասին ՝ի կարգս հարապատ

*) Սոքա անուամբ միայն կաթողիկոս նստած էին Յունաց իշխանութենէն ՝ի Հոռի։

կաթողիկոսաց, որպէս և ուչ Գէորգ Լուսեցի“ (Ճամչ· հատ· Բ· էջ 1001)։ Եթէ Լուսակարեանն Ճամչեանի գրած կարգին հաւան էր, պարտական էր զմեր այժմեան Գէորգ կաթողիկոսը՝ Եղիազար անուանել, (որպէս 'ի սկզբան անդ յառաջ քան զօծումն անուանած էին ազգային պարբերական թերթերն *), և ուչ թէ Ղազար· իսկ եթէ չէր հաւան, պարտական էր հարկաւ՝ զոնէ Գէորգոնելի թիւը լուսցուցանելոյ համար՝ զանպիտան տիրախաբ Լուսեցին սրբազնացնել և հարազատ կաթողիկոսաց կարգումն դնել, ինչպէս գրած է գՍուրմակ, գԱրքիշոյ և զՇ մուէլ։ Բայց ուչ այսպէս ըրաւ վերապատուելին և ուչ այնպէս։ Ինչո՞ւ-ինքն գիտէ։

ԱԶԳԱՑԻՆ ԲԱՐԵՐԱՐՔ ՎԵՐՋԻՆ ԴԱՐՈՒ

Ա·

ՄԻՐՋԱՅԵԱՆ ՄԱՆՈՒԿ ՊԷՅ ԵՒ ՀՆՉԵՇՏԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ։

„Մի գիտասցէ ձախ քո, զինչ գործէ աջ քո“։

Ռուսիոյ Հարաւային-Արևմտեան սահմանամերձ այրում՝, պետարապետոյ Նահանգին մէջ, ուր՝ չէ յայտնի՝ զոնէ 'ի լոյս՝ հանդուցեալ հռչակաւոր հայկազն Իշխանի, Միրզայեան Մանուկ Պէյի, անուանն· և ոչ չգիտէ հօրմէն պայ-

*) Տես 'ի փոՀՀ լրագրին Կ· Պոլսոյ 1867 ամի, թիւ 156·

ապատ Յովհաննէս-Մուրատ Մանուկ Պէյը, որ այժմ՝ ի կեանս է՝ իւր առաքինական ազգօգուտ արդասիքներովն պայծառացած։

Եթէ կամենամք առաջնոյն բազմահանդէս և զբեղեալ անօրինակ կենաց չնակատար նկարագիրը յանդիման կացուցանել, և նորա հանճարօրէն՝ զզուշագոյն՝ միանգամայն և անվեհեր՝ գործունէութիւնը թէ առանձնական և թէ քաղաքային կամ՝ պաշտօնական գործառնութեանց մէջ, մանրամասնաբար պատմել, կհարկաւորի մեծատարած մատեան հրատարակել, թեև ունիմք արդէն այդ մատեանը ի գրոց բարբառ՝ Մսեր Մաղիստրոսի գրչէն եկած։*)։

Ուստի բաւական համարուի մեզ ասել՝ թէ նորա բարեբարութիւնքն մինչև ցայժմ բերանէ ի բերան պատմուելով՝ կենդանի մնում են Հարաւային Ռուսիոյ Հայերի մէջ։ Աստուածահաճոյ բարեգործութեան ձիրքը ժառանգեալ և նորա մեծ որդին՝ պայազատ Յովհաննէս Մուրատ Մանուկ Պէյ, որ իւր հօր նման չէ՝ դադարում՝ մինչև ցայսօր բարիք գործելու։ Ի առ մի յիշատակելու և սորա գործքերը իրաւունք չունիմք։ չունիմք, ասում եմ՝ իրաւունք, բայց որում՝ հայը և որդի իւրեանց բարեգործութեանց մէջ պահած են միշտ, և պահում է վերջինս մինչև ցարդ ՔՐԻՍՏՈՍԱՏՈՐ խրատ։ „մի գիտացէ ձախ քո, զինչ գործէ աջ քո“։ Իսկ ամենայնոյն յայտնի բարեգործութեանց և Աստուածահաճոյ գործոց միջէն առաջին տեղն ունի հոյակապ քարաշէն եկեղեցին, զոր կառոյց յանցելում՝ ամի Յովհաննէս Մանուկ Պէյն ի Հնչեշտ գիւղաքաղաքին (որ նորա ղլեաւոր դասատակերան է բարձրայարկ պալատով զարդարուած), ի տեղի հին փայտակերտ եկեղեցւոյն*), բայ ձեւագծութեան Պերնարտոյի ճարտարապետին։

Այս սուրբ տաճարս, որ նուիրեալ է յանուն տիրամօր սուրբ Կուսին, թէև փոքրագիր՝ բայց գեղեցիկ շինուածովն, և բայ իմիք դմբեթի արտաքին ձեւակերպութեամբն նմանու-

*) Այն մատենիս կարճառօտ քաղուածներով հիւսուած է, այն՝ բազմօք թերի՝ և բայ բանիւք խառն՝ փոքրիկ տետրակն „Պատմութիւն Մանուկ Պէյի“ մակագրեալ, որ ի լոյս ելաւ Մխիթարեանց տպարանէն ի Վենետիկ աշխարհիկ լեզուաւ ի թուին 1852։

թիւն եւս ունելով Ս· Էջմիածնի տաճարին, Ռուսիոյ մէջ գտանուած վայելչաշէն եկեղեցեաց մէնն պիտի համարուի։ Աւելորդ չհամարուի մեզ յաւելացնել և այս՝ թէ սոյն տաճարիս մէջ գտանուած քանի մի պատկերքն, զոր օրինակ պատկերն Դատաստանի, եւն, եղած են Իշխանազն Սիմէոն Դաւթեան Ալամէլիքի վրձինէն։

Այս ազգօգուտ գործերից Յովհաննէս Մուրատ Մանուկ Պէյի՝ կարելի է յիշել այն գրամական օժանդակութիւնքը, զոր անում է նա յիւրաքանչիւր ամի ուշ միայն Օտէսայի, Քիշնեւի, Հնչեշի, Պուքրեշի, եւն, Հայ դպրոցաց, և ուսումնարանաց, այլ և ազգատաց, որոց, այրեաց, և ամենայն կարօտելոց առ հասարակ։ Ի թիւս այնոցիկ, որք մեծերախտ Բարերարիս առանձին թեւարկութեան տակ պատսպարուելով՝ արժանացած են խաղաղական և անքոյթ կենաց քաղցր արև վայելելու, բաղդ է ունեցած գտանուիլ և տողերիս դրողն, որպէս և նորա ծնողքն ի բաղում ամաց հետէ։ Շնորհաւորանիլ զայս հրապարակաւ՝ ընդդէմ է արդարութեան։

Բ·

Ե· Մ· ԳԱՍՊԱՐԵԱՆՑ ԵՒ ՆՈՐԱ ԱՂՔԱՏԱՆՈՑՆ Ի ՄՈՍԿՈՒԱ։

Այրաքաղաքիս Հայոց Ս· Խաչ անուամբ եկեղեցւոյ բակում կառուցուած Գասպարեան աղքատանոցն անանկ Հայերի համար՝ յայտնի է որոց միանգամ եղած են Մոսկուայում· իսկ նոցա համար՝ որք երբէք եղած չեն մայրաքաղաքումն, և զուցէ անուանն եւս Գասպարեան աղքատանոցի լսած չեն, արժան եմք համարում քանի մի տեղեկութիւնք տալ այդ Աստուածահաճոյ և օգտաւէտ հիմնարկութեան վերայ, որ հաստատուած գոլով կայսերական բարեհաճութեամբ, աշխատում է միշտ բարի գործեր կատարել,

*) Այս եկեղեցիս՝ զոր կանգնած էին Մանուկ Պէյի ժառանգքն՝ յետ նորա վախճանին, օծեց ի 1829 թուին երջանկայիշատակ Ներսէս Կամիողեկան՝ երբ որ Ռուսաստանի էր նա Պետերբուրգիոյ վիճակին։

այն է՝ դարմանել աղքատ և անանկ համազգի անձինքներ, տալ՝ ի դատարակութիւն չքաւոր կամ՝ օգնականութեան կարօտ համազգեաց մատաղ աղջկունքը, և այլն, և այլն։

Բարեպաշտօն և վսեմախոհ անձն՝ որ նախ առաջին ծնունդ տուաւ՝ Մոսկուայի մէջ տնանկացեալ Հայերի համար՝ աղքատանոց հիմնելու մտքին՝ է Գեներալ-Մայոր Պօղոս Մովսիսեան Մէլիքեանցն, որ հայրենասիրական ոգւովն ջանադիր էր միշտ և ցանկացող իւր հայրենակցաց և համազգեաց օր ըստ օրէ բարգաւաճանաց, բարոյական և մտաւորական յառաջադիմութեանը։ Մէլիքեանցի այս բարի մտածողութիւնն պաղաբերեցաւ ըստ մեծի մասին այն նշանաւոր նուիրաբերութեամբն, զոր արաւ պատուաւոր քաղաքացին և ասպետն Եսայի Մովսիսեան Գասպարեանց։

Աղքատանոցի կանոնքն, որ գծագրուեցան Մէլիքեանցէն՝ արժանացան Կայսերական Բարձրագոյն հաստատութեան՝ ի 27 Նոյեմբերի 1845 ամի, և այժմեան ժամանակումս աղքատանոցն՝ նոյն կանոնների համեմատ գտանուելով մայրաքաղաքիս արժանաւոր և բարեջան հոգատարութեան տակ, այն է՝ մեծարգոյ պարոնայցս՝ Յովհաննէսի Ս. Յովնանեանց, Միքայէլի Յ. Պատերանեանց, Մելքոնի Գ. Փանիեանց, և Գէորգայ Մ. Լիանոզովի, որ նաև վերատեսչի ու տնտեսի պաշտօն կատարող է, շարունակում է իւր բարեգործութիւնը։

Ձկամելով երկարել այս տեղ մեր խօսքը մանրամասնաբար պատմելով հանգամանքները նոյն աղքատանոցի, ևս և նորա ել ու մուտքի հաշիւը անցեալ 1872 թուականի, որ կարդացուեցաւ՝ ի լուր մայրաքաղաքիս Հայ հասարակութեանը, և քննուեցաւ նորանից Փետրուարի 25 ին ներկայ 1873 ամի, մեք լաւ եմք համարում՝ մեր ազգայնոց միտք բերել՝ թէ յիշեալ աղքատանոցում՝ գտանուում՝ է ժապաւինեալ մատեան նուիրաբերութեան համար, և նուիրատուաց տուրքն ընդունուում՝ են յատաջիկայութեան վերոյիշեալ պատուելի անձանց։

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

Փեթերպուրկում հրատարակուած ռուսերէն „Голосъ“ անուն լրագրի ներկայ ամի 92 թուոյն մէջ տպագրուած տեսանք „Единовѣрецъ“ ստորագրութեամբ մի յօդուած ընդ վերնագրով. „Въ защиту Армянской церкви“, որով կամենում է ճշմարտասէր հեղինակն պաշտպանել զմեր եկեղեցին և հաւատը յայն սուտ և անհիմն զրպարտութիւններից, որք գտանուում են ռուսերէն „Очеркъ исторіи Христіанской церкви“ (свящ. Лебедева), վերնագրով մատենին մէջ։ Այս յօդուածս մասամբ իւրեք յիշեցնում է մեզ Մսեր Մաղիսարոսի պատասխանը *) առ ռուսերէն „Моск. Вѣд.“ անուն լրագիրն, որ հերետիկոս անուանած էր Հայերը։ Այժմեան յերևան եկած զրպարտութեանց մէջ տեղի է ստացած նաև այն կարծիքն՝ թէ Հայք կատարում են որպէս թէ զթլփատութեան ծէսը։

---

*) Այդ պատասխանն 'ի 1866 թուականին տպագրուեցաւ նախ և յառաջ „С.-Петербургскія Вѣдомости“ անուանեալ լրագրին մէջ, Հ. 269, և ապա նորա թարգմանութիւնքն դաղղերէն և հայերէն լրագիրների մէջ Եւրոպա և 'ի Տաճկաստան։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

„Յանոսի յաղագս պապին և ժողովոյ նորա և յաւելուածս։ Թարգմանեաց Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեանց Մխիթար Սրբոյ Էջմիածնի. ի Վաղարշապատ 1871 ամի“։

Մատեանն, որոյ այդ է վերնագիրն, թէպէտ և ի վաղուց (ի 1871 թուականին) ի լոյս ելած է, սակայն այնքան երևելի գործ է, որ մեք աւելորդ չեմք համարում քանի մի խօսք խօսել այդ չքնաղ երկասիրութեան վերայ, ճշդութեամբ պահելով մեր յառաջադիր առածը (ԳԵՎԷՆ). „Լաւ է անագան քան ոչ երբէք“։

Սկզբնական պատճառ հրատարակութեան, կամ լաւ ևս ասել՝ յօրինուելոյ Յանոսի *) մատենին եղև Հռոմայ պապի զումարած ժողովն, և նորա (պապի) կարծական անսխալականութեան հաստատութիւնն։ Այդ գրքի մէջ Յանոսն յայտ յանդիման ցուցանում է պապական շինուածոյն հիմանց փտութիւնը, ստոյգ աղբիւրներից առուած հաւատի վկայութեամբք, խոյտառակելով հրատարակում է բոլոր անվաւեր և անհարազատ բանքը և ստայօդ գրուածքը Հռոմայ պապերի

*) Յանոս անունն ստեղծաբանեալ կոչումն է մատենի հեղինակին, որ զանազան պատճառներից ստիպուած՝ պատշաճ է համարած իւր սեպհական անունը ի գաղտնիս թողուլ։

շահասէր և շղղրմարար պաշտօնէից, որք ամենայն ջանիւք աշխատում էին յայնժամ այնոր-բինակ սուրթեանց վերայ հիմնել և հրատարակել պապի անսխալականութեան մոլար վարդապետութիւնը։ Միով բանիւ, Յանոսի մատեանն, որ թարգմանուած է համարեա թէ յամենայն եւրոպական լեզուներ, մեծ գիւտ է մերազնեայց համար, և մեք, թէ աշխարհականք և թէ եկեղեցականք, պարտական ենք մատուցանելու մեր լիակատար շնորհակալութիւնը Արբաղան Գաբրիէլ Եպիսկոպոսին, որ մտադիր սիրով ձեռնամուխ եղև այդ գործը 'ի Հայկական բարբառ շրջելու։

'Ի մասին սոյն այս թարգմանութեան Յանոսի գրքին՝ մեք խօսք չունիմք ասելու, ըստ որում այնպիսի քաջահմուտ՝ արժանաւոր թարգմանչի և լեզուագէտ հայկաբանի գործ է այս, որ կարող է իրաւամբք պարծանք լինել մեր ազգին, ոչ միայն ներկայ դարուն՝ իւր պիտանաւորութեան պատճառաւ, այլ և ապագայ դարերուն՝ սքանչելի օրինակ լինելով զրոց աշակերտներին յանսայթաք թարգմանութիւն ընտիր և յարդարուն ոճով ըստ ճիշդ կանոնաց հարազատ հայկաբանութեան, թէև թարգմանիչն համեստութեան աղագաւ, և կարծես թէ հեռացնել կամելով ընթերցողքը այսպիսի բանաքննութենէ, փոքր մի այլազգ է խօսում իւր այս երկասիրութեան Յա-

ռաջաբանի մէջ. „Ուշ եղեալ, ասում է, առաւել պարզութեան ոճոյ թարգմանութեանն՝ քան ճշգրտութեան կանոնաց հայկաբանութեան՝ եթէ ըստ բառիցն ընտրութեան և եթէ ըստ դարձուածոց շարամանութեան, յերիւրեցաք զթարգմանութիւնս մեր ըստ կարի մեկն և զիւրիմաց բանիւ, որ զոգցես փոքու և եթ զանազանիցի 'ի ռամկական խօսից“: Սակայն մեք այսու ամենայնիւ չեմք խղճում, այլ՝ մանաւանդ պարաք եմք համարում յանկեղծ սրտէ այս սակաւատող դրուատը նուիրել մեծաշնորհ թարգմանչին:

Բ.

„История Монголовъ по Армянскимъ Источникамъ. Выпускъ 1-й, заключающій въ себѣ извлеченія изъ трудовъ Вардана, Стефана, Орбеліана и Констабля Сембата. Переводъ и объясненія К. П. Патканова. С. П. Б. 1873“. (Այն է՝ „Մոնղոլաց պատմութիւնն հայկական աղբիւրներէն“):

Այսպիսի վերնագրով հրատարակուեցաւ տարեւոյս սկզբում ուսուցչապետ Պ. Կ. Պատկանեանի նոր աշխատութիւնն, որոյ մէջ բերուած են թարգմանութիւնքն այն ամենայն տեղեկութեանց՝ Վարդանայ, Ստեփանոսի Օրբելեան և Սմբատայ պատմութիւններից, որք վերաբերուում են Մոնղալ կամ Մողոլ (Ռուս. Монголъ) անուանեալ ազգին թաթարաց: Պ. Պատկանեանի բոլոր ժողոված նիւթերն ամփոփուած են երկու

տեարակաց մէջ, որք Մաղաքիայի պատմութեան հետ պիտի կազմեն մի ամբողջ Տեղեկագիր Հայկական աղբիւրներից քաղուած։

Որովհետև վերևում յիշատակուած պատմագիրներն մի անգամ թարգմանուած են, և նոյն իսկ թարգմանիչն, Պ· Պատկանեան, սկսած է այժմ երկրորդ անգամ թարգմանել զայնս, այսու պատճառաւ նա իւր յառաջաբանութեան մէջ ասում է· „Ի մասին բնագրի իմաստիցն և նշանակութեանց քանի մի ձևոց բանից, ես տեղ տեղ անհամաձայն եմ գտանում կարծեաց այնպիսի հմուտ թարգմանիչների, որպիսի են պարոնայքն՝ Լեմին և ակադեմիկ Պրոսսէ։ Մինքանիսը, առաւել խոշորները՝ այնպիսի տեղերից, ես ցուցանում եմ գրքի լուսանցներում։ Ընդ սին, տեղորդ չեմ համարում յաւելացնել և զայս՝ թէ այս գործումս յորդորում էր զիս ոչ իրձն իմ նախորդաց սխալները խուզարկելու, այլ ջանքն և դիտումն բացատրելու ճիշդ և իսկական նշանակութիւնքը բանից իմ պարապմանց նիւթ եղած բնագրերի։ Այս իմ թարգմանութիւնը ճոխացուցի նաև կարճառօտ ծանօթութիւններով, բայց չկրկնելով ինչ որ գրուած կան արդէն Մաղաքիայի պատմութեան թարգմանութեանը մէջ“։

Պ· Պատկանեանն խոստանում է՝ իւր յիշեալ աշխատութեան երկրորդ տեարին մէջ զետեղել

Կիրակոսի Գանձակեցւոյ ամբողջ պատմութեան թարգմանութիւնը, բաց յինն գլխոց՝ սկզբումը, և բաց 'ի քանի մի գլխոց՝ միջումը, որոց մէջ ճառուում է առաւաձարանական խնդրոց վերայ։

Գ.

„Шараканы или Священные гимны Армянской восточной церкви. Перевелъ съ древне-Армянскаго языка Н. Эминъ. Москва, 1873 г.“ (Ա.ին է՝ „Հայոց եկեղեցւոյ Շարականքն“)։

Ցախ „Православное обозрѣніе“ անուն ռուսերէն կրօնական ամսագրի ներկայ 1873 ամի Մայիս ամսեան տետրին մէջ, և ապա առանձին տետրակով հրատարակուեցաւ մեր համագրի ռուսումնական Պ. Էմինի մի նոր թարգմանութիւնն ընդ վերոյշանակեալ վերնագրով, որով նա կամենուում է ծանօթ կացուցանել ռուս հասարակութիւնքը մեր եկեղեցւոյ գեղեցկահիւս Շարականքէն խորհրդաւոր և վսեմ իմաստներին։ Այս առաջին փորձ է՝ սոյն Աստուածօրհնութեանց հրաշալի գիրքը (որոյ մէջ բովանդակուած կան գրեթէ ամենայն գլխաւորագոյն մասունքն մեր Հայաստանեայց եկեղեցւոյ ողջամիտ վարդապետութեանց) 'ի Ռուսաց բարբառ փոխելու։ Յուսալի է՝ թէ Ռուս մատենագիրք, մանաւանդ եկեղեցականք, այս թարգմանութեան ընթերցմամբ

աւելի մերձաւորապար ծանօթանալով մեր եկեղեցւոյ դաւանութեան, չհեռեին գոնէ այսուհետև՝ հակառակասէր հեղինակաց գրածներին մեր ազգի և եկեղեցւոյ վերայ, և չանկանին ազիատական և ծիծաղելի սխալանաց մէջ, որպէս անկաւ նորերում Լեբեդեվ (Лебедевъ) անուն քահանայն՝ նորոգելով իւր Եկեղեցական Պատմութեանը մէջ (որ 'ի լոյս ելաւ 'ի Փեթերպուրկ այս տարի Փետրուար ամսում, և որ յիշուում է Փարոսի սոյն այս տետրի մէջ) բաց յայլոց, և մի այլանդակ հնացած փուտ կարծիք, կամ պարզ ևս ասել զրպարտանք, իբր թէ մեք Հայքս զկնի երեսուն այից մկրտութեան՝ կատարում ենք նոցա վերայ և թնդիապատութեան օրէնքը։

Պ· Լամինի այժմ 'ի լոյս ընծայած տետրակին մէջ բովանդակուած կայ պատմութիւն շարականաց թարգմանութիւն, և ցվերջ տարւոյս խոստանում է նա առաջի առնել ռուս ուսումնականաց բոլոր հարիւրեակ շարականաց թարգմանութիւնը։

Այս գործոյս յառաջաբանութեանը մէջ, Պ· Լամին՝ զկնի ցուցանելոյ իրաւացի պատճառները, յորոց ստիպուած է ինքն այս թարգմանութեան ձեռնամուխ լինել, խօսում է ընդարձակօրէն նաև բուն թարգմանած գրքի անուանց, այսինքն Շարական և Շարակնոց բառերի վերայ, ցուցանելով նոցա ծագումը արմատական բառէս զէր, որ նշանակէ երգ։

„Աստուածօրհնութեանց որ առ մեզ մատեան՝
Յառաջնոյ 'ի Հարց կոչի Շարական.
Բայց արմատ բառիդ՝ Շար է, և կամ Շէր,
Ըստ Գաբրիէլի *): Զայս դու մի՛ մերժեր՝.

ասում է Մաղիսարոս Մսերեանցն իւր „Խմբագիր լափաձոյ բանից" վերնագրով գրքին մէջ, տպեալ 'ի Մոսկուա, 'ի 1864 ամի, յէջ 121:

Առանձին յօդուածով բուն թարգմանութեան վերայ խօսիլ Փարոսի մէջ՝ պատշաճագոյն է զկնի հրատարակման բոլոր շարականաց թարգմանութեան:

Գ.

„Զայն բաղմաց: Վաղարշապատ. 1871 ամի":

Այս գիրքս թէպէտ և հրատարակուած է երկու ամաք յառաջ, բայց անակնուելի պատճառներով՝ նոր այժմ հասաւ մեր ձեռքն:

Արժան եմք համարում զայս հրատարակութիւնը ևս յիշել, ըստ որում գուցէ շատերն կցուսան գտանել այս գրքիս մէջ այն՝ որ չկայ նորա մէջ: Մատենիս բովանդակութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ զանազան երգեր և ճառեր, որք այլ և այլ տեղերում ասուեցան առաջի այժմեան Վեհափառ Գէորգ Կաթողիկոսի: Եւ եթէ առանձին իմն արժանի ուշադրութեան բան կայ սորա մէջ՝ այն է, որ այժմեան վեհափառ Կաթողիկոսն միակերպ չէ անուանուում. երբեմն

---

*) Գաբրիէլ վարդապետ 'ի Բացատր. Շարակ. 'ի Յառաջաբ. յէջ Թ. Ժ:

կոչու�մ է նա Գէորգ Երրորդ (յէջ 11, 51, 55), և երբեմն Գէորգ չորրորդ (յէջ 76, 77, 84, 102, 135, ևս և 'ի գրան և 'ի յառաջաբանի) *)։ Եթէ Ընջմիածնական տպարանն թոյլ է տալիս այսպիսի անհամաձայնութեանց տեղի ունենալ՝ իւր մամուլէն ելած թերթերի մէջ, և եթէ նորա կառավարիչքն իսկապէս չգիտեն այժմեան Կաթողիկոսի երրորդ թէ չորրորդ Գէորգ լինիլն, մեծ պատիւ չէ նոցա։ Եւ եթէ այսպիսի պատմական անհամաձայնութիւնք ժամանակակից անձանց վերայ տեսանում ենք մեր օրերում, ոչպիսի անհամաձայնութիւնք տեսանելու ենք անցեալ դարերի անձանց վերայ։

Ահա այլ հանդամանք մի ևս։ Տպագրեալ երգերն և ճառերն, որպէս մեզ թուի, իւրեանց բնագրին համաձայն տպագրուած չեն, և լի են վրիպակներով՝ թէ տառից և թէ բառից, որք ցոյց են տալիս տպագրիչների խակ և թոյլ լինելն մեր լեզուի մէջ։ Մեզ յայտնի եղած ճառերի միջից կարող ենք ցոյց տալ Մագիստրոս Մսերեանցի ճառը, որի մէջ տեսանում ենք զհետևեալ սխալները· յէջ 110՝ զշնորհաւէրդ, փոխանակ շնորհաւէրդ· հանդէպեցին, փոխանակ հանդէպեցին· զհոմանաւորդդ, փոխանակ զհոմանաւանդ· յէջ 111՝ Գրիգորեանց, փոխանակ

*) Տես յօդուածն „Ո՞վ էր Գէորգ Երրորդ կաթողիկոսն“ տեարիս 29 երորդ էջում։

Դրչիգորչեանց. Դոպին, փոխանակ Դոպին. ընորհաւորչել, փոխանակ ընորհաւորչեալ։

Ի.

„Պապմոնիկոն Հայոց սկսեալ ի 1772 ամէ Փրկչին մինչև յամն 1860 հանդերձ կարևոր տեղեկութիւնքով և ժամանակագրութիւնքով երևելի երից. աշխատ. Աւետ. վարժապ. Պերպերեան. կ. Պոլիս. 1871“։

Դարձուցանում եմք մեր ընթերցողաց ուշը այս գրքի վերայ, որպէս անկատար և լի պատմական սխալներով աշխատութեան։ Թէպէտ և պատուելի հեղինակն իւր յառաջաբանի մէջ՝ Ռուսաստանի դորձոց համար ասում է՝ թէ „զդէպս վերաբերեալս յայնոսիկ կողմանս հարցուփորձ արարեալ ծերունի արքեպիսկոպոսաց, ուղղագրեցաք որ ինչ երկբայելի թուէին մեզ“, սակայն այսու ամենայնիւ դեռ շատ բան կայ ուղղագրելու այդ դէպքերի մէջ, և մանաւանդ ինչ որ վերաբերի Սերսէս Կաթողիկոսի օրերին և Լազարեանց տոհմի անցքերին։ Պատուելի հեղինակն ի հարկէ այդպիսի ազգատական սխալանաց մէջ անկանելու չէր, եթէ գոնէ մի անգամ աչքից անցուցած լինէր Մագիստրոս Մսերեանցի „Յեղափոխքան պոհմին Լազարեանց“ վերնագրով գիրքն, որ տպուած է ի 1856 ամի, ևս և „Ռոսատաղի“ մէջ տպագրուած յօդուածներն Երջանկայիշատակ Հայրապետին վերայ։

ՆԱՍՐ-ԷՏՏԻՆ ՇԱՀ ՊԱՐՍԻՑ

ՆԱՍՐ-ԷՏՏԻՆ ՇԱՀ ՊԱՐՍԻՑ։

Առաջինն 'ի Պարսից թագաւորաց, որ ելանելով յիւր երկրէն՝ յայց ելաւ Եւրոպական տէրութեանց՝ է Նասր-Էտտին Շահ։ Երկարօրէն խօսել նորա այդ ճանապարհոր-

դութեան վերայ, և ս. այն պատուոյն և մեծաշուք փառաց ընդունելութեանց վերայ, որոց արժանացաւ նա՝ նախ 'ի Ռուսաստան, և ապա 'ի Գերմանիայ, Անգղիայ, 'ի Գաղղիայ, և այլն, աւելորդ եմք համարում. բաւական է ասել՝ թէ նպատակն ծանօթանալու Եւրոպիոյ լուսաւորեալ ազգերի կարգաց և կանոնաց, և ապա նոյն կարգերը և կանոնները իւր երկրում 'ի գործ դնելու՝ արդէն մեծ խորհուրդ ունի ապագայի համար, և առանց երկրայութեան Նասր-Էտտին Շահի անունն ոսկի տառերով պիտի գրուի Պարսից պատմութեան մէջ։

Տպելով այս տեղ հռչակաւոր Նասր Էտտին Շահի կենդանագիրը, անպատշաճ չեմք համարում 'ի մէջ բերել նաև Մ. Մ. այն ափ յափոյ գրուած սակաւատող երգը, զոր քաջալերական երգելով նորա առաջև Լազարեան ճեմարանի Հայ աշակերտներն, երբ որ նա յայց ելաւ նոյն ճեմարանին (Մայիսի 8 ին ներկայ 1873 ամի), արժանացան Աբբայական յատուկ շնորհակալութիւն լսելու բերանով մեծագնեայ Մելքոն խանի, որ Պարսից տէրութեան արտաքին գործոց նախարար է։ Ահա՛ այդ երգդ.

„Կեցցէ՛ մեծափառ Արեւոյն արի Շահ,
Կեցցէ՛ յաւիտեան փառաց պերճ 'ի Գահ։
Կեցցէ՛ կեցցէ՛ Նասր-Էտտին Շահ,
Արեւոյ զարմին եօթնալոյս Ջահ։

„Նորս ահա Կիւրոս մանկաբուդս զհրաստ
Վեհ այցելութեամբ արար բարեբաստ։
Կեցցէ՛ կեցցէ՛ Նասր-Էտտին Շահ,
Արեւոյ զարմին եօթնալոյս Ջահ։

Նասր-Էտտին Շահ, որ քաջար անուանեալ ցեղէն է, որդի Միրզա Մէհէմմէտ Շահի, և թոռնորդի Ֆէթհ-Ալի Շահի, ծնած է 'ի 1829 ամի 'ի Հոկտեմբերի 30, և յԱթոռ թագաւորութեան նստաւ 'ի 1848 ամի 'ի Սեպտեմբերի 10։

ԽԻՎԱՅԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ։

Մայիսի 29 երորդ օրն ներկայ 1873 ամի մեծ և նշանաւոր օր է Ռուսիոյ համար։ Այդ օրում Ռուսիոյ զօրքն պայծառացան նոր լուսափայլ փառքով, այդ օրում Խիվայի իշխանութիւնն կործանեցաւ անկաւ նորա առաջև։

Խիվայի խանութիւնն մինչև ցայժմ՝ իւր տեղական դիրքովն և բնական հատկութեամբքն՝ համարուում էր անմատչելի, և այն սակաւաթիւ ճանապարհորդներն, որոց յաջողեցաւ երբեմն հասանել և տեսանել այդ երկիրը՝ զարմանք էին զարթուցանում Եւրոպայում։ Իսկ այժմ Ռուսաց զօրքն ցոյց տուին՝ թէ իւրեանց համար ոչինչ անկարելի չկայ. ցոյց տուին՝ թէ տարածուած կարծիքն Խիվայի անմատչելի լինելոյն վերայ՝ սխալ է, և թէ „այդ արշաւանքդ, որպէս ասաց Վամբէրի Times լրագրին մէջ, նսեմացնում է Անիբալի և առաջին Նաբոլէոնի արշաւանքները“։ Ահա այս իսկ է պատճառն՝ որ փոքրիկ փարոն էս չէ կարող չյիշատակել իւր թերթերի էջերում այս երևելի՝ արժանի յիշատակի՝ անցքը, որ եղև ներկայ դարուս մէջ, ի փառս Ռուսաստանի և այժմուս թագաւորող՝ մեր ամենագթած կայսեր։

Փոխանակ երկար ու ձիգ նկարագրելու Ռուս զօրականաց ցուցած քաջագործութիւնքը Խիվայն նուաճելու ժամանակ, էս և այն դժուարութիւնքը, որոց հանդիպեցան նոքա իւրեանց չուարարութեան ժամանակ, արժան եմք համարում բերել այս տեղ Փէոմի Լոյդ անուանեալ լրագրի միջէն վերոյիշեալ Վամբէրի ճանապարհորդի՝ որ այդ երկրում եղած էր քանի մի տարով յառաջ՝ գրածը յայդ մասին. „Ռուսերը, ասում է նա, մտան խաթայի անապատը, ուր ինձ և իմ փոքրիկ կարաւանին ոտն և աւաղն մահ էին սպառնում, մտան յայն անապատը, որ թողուց իմ մտքում յոյժ սոսկալի յիշատակ բոլոր իմ տասնամեայ ճանապարհորդութեանցս միջէն։ Ադամ Էրքեղլան, որ թարգմանի՝ Մարդակոտոր պէղի, — այսպէս էր կոչուում այն կայարանն, որ յիշուած է իմ ճանապարհորդական տետրակին մէջ։ Այդ անունդ գալիս է մեզ այժմ՝ հերագրական համբաւներով որպէս տեղի, ուր կենդրոնացած կայ բանակն կազմուած

ՀՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ի ԽԻՎԱՅ։

КАРТА ХИВИНСКАГО ХАНСТВА *).

*) Бѣлые кружки означаютъ города и поселки, черные кружки — колодцы и ключи, черные четырехъугольники — укрѣпленія и крѣпости.

աւելի քան 'ի 6000 մարդոց... 'Ի միա բերելով աւաղուա բլուրները, հեղձուցիչ սոթը, գարշահոտ ապատաղին (ապի) ջրոց աղբիւրները այդ տեղերի, չեմ կարող ես չհիանալ ուսա գենուորների մեծ դիմացկութեան, վիմարգեայ անսասանութեան, հսկայական անվեհերութեամբ զրոհ տալոյն վերայ, այն գենուորների ասում եմ, որք այժմ իւրեանց թագաւորի գրոշակը ծածանեցնում են այդ երկիրներում, որք գրոշմուած են բնութեան ցաւագին անեծքով։ Տապախառն ջերմութեան առաջին 40 աստիճանէն ցետ՝ բան Ռեօմիւսի, Հիւսիսայ որդիքն՝ քանի մի վերշոքի խորութեամբ ջերմայած տապակեց աւազն վերայ դիմում են դէպ 'ի յաղթանակ իւրեանց օրհնարանական երգը Боже Царя Храни վերահնչելով՝։

Բերուած խօսքերս նշանաւոր և թանկագին են մանաւանդ այնու, զի նոքա ելանում են այնպիսի մարդոյ բերանից, որ յայտնի է որպէս բարի չցանկացող Ռուսիայ համար։

Ռուսաց զօրաց այս արշաւանաց արդասիքն առ այժմ եղև այն՝ զի Յունիսի 12 ին, ներկայ ամի, Խիվայի Խանն Սէիտ Մուհամէտ Ռահիմ՝, որ զենքը և գիւր ժողովուրդը տուաւ Ռուսաց ձեռքը՝ անուանելով զենքը ծառայ Ռուսաց թագաւորի, և որ 'ի նորոյ կացուցաւ իւր խանութեան աստիճանում՝, հրովարտակով հրատարակեց՝ թէ 'ի սեր թագաւոր Կայսեր խանութեան բոլոր սարտակներն (որոց մեծ մասն Պարսիկներ են) ազատուում՝ են, և սարկութիւնն վերջանում է յաւիտեան։

»ԼՈՒԾՈՒՄՆ ԻՐԱՒՈՒՆՑ«։

Փարոսի առաջին տեարին մէջ՝ Էջմիածնական տպարանի գործունէութեան վերայ խօսելոյ ժամանակ 'ի մէջ բերինք Մագիստրոս Մսեր Մսերեանցի նամակը առ մեր Վեհափառ Կաթողիկոսը, և մեր ընթերցողք տեսան 'ի հարկէ՝ թէ որպիսի անկարգ գործեր են կատարուում մեր մէջ։ Այսօր կարող եմք յաւելացնել այդ անկարգութեանց վերայ և այլ քանի մի նոր տեղեկութիւններ, որք սէ պակաս ուշադրութեան արժանի են։

Հայանի է մեր ընթերցողաց՝ թէ մեք արդէն քանի մի տարի է որ ապատում՝ եմք կատարման Ս· Պետրոս եպիսկոպոսի նամակին մէջ յիշուած Սինոդի անօրէնութեան (փարոս, տեսը Ա· էջ 39)։ Եւ վերջապէս անցեալ 1872 ամի Դեկտեմբեր ամսում՝ ի դատաստանական մասնէ Էջմիածնական Սինոդի ստացայ ես միայն լոկ դեկուցումն (՝ի 28էն Դեկտեմբերի 1872 ամի ընդ թուահամարովս 3390), և ոչ տնօրէնութիւն ինչ՝ ի մասին կանոնընդդէմ գործոյն Յովսէփայ աւագ քահանայի Կոստանեանց, որպէս մէջ բոլորովին լռութեամբ է անցանում Ս· Սինոդն՝ ի մասին նոյնպիսի, եթէ ոչ առաւել ևս ծանր կանոնընդդէմ գործոյ ապաշանի Սրբոյ Աթոռոյն։

՝Ի մասին կանոնընդդէմ գործոյ Յովսէփ աւագ քահանայի Կոստանեանց դատաստանական մասն Սինոդի ծանուցանում է ինձ թէ՝ անդամն Հոգևոր Կառավարութեան Հայոց Ալեքսանդրապոլու, Յովսէփ աւագ քահանայն Կոստանեանց, առ հարցումն Սինոդի՝ թէ արդարև ապաշրել է նա՝ ի Տփխիս 1865 թուականին զԲրիստոնեական վարդապետութիւնն Մսերայ Մսերեանց, պատասխանել է յայտարարութեամբն իւրով, որ՝ ի 24 Սեպտեմբերի 1872 ամի, թէ՝ „վասն ապաշրելոյ զԲրիստոնէական վարդապետութիւն անուանեալ գրքոյկն՝ ստացեալ է նա զլուծումն էրուանց՝ ի հանդուցեալ Մատթէոս Կաթողիկոսէ ամենայն Հայոց“։

Պատճառաբանութիւնն Կոստանեանց Հօր, որով աշխատում՝ է նա այժմ արդարացուցանել իւր անձը՝ ոչ միայն անսայդ և անհիմն ապացոյց է երևում՝, այլ և լոկ բան հանձարոյ, յեսոյ ուրեմն յօդացեալ (հիւսուած)։ Այսպէս կարծել ասն ինձ երեք պատճառք։ Առաջին պատճառ այն է՝ որ երբ որ ես նամակովս՝ ի 4 էն Ապրիլի 1868 ամի խընդրեցի՝ ի Կոստանեանց հօրէն յայտնել ինձ՝ թէ որոմ իրաւամբք ապել տուած է նա Մսեր Մաղիսարոսի կրկին դրական վաստակները՝ որոց մակագիրքն են „Մասնը Ուսմունք Քրիստոնէական հաւատոյ, և Սրբազան պատմութեան Աւետարանի“, նա՝ նոյն թուականի Մայիսի 4 էն առ իս ուղղեալ պատասխանագրութեանը մէջ, չծանոյց ամենևին, թէ ինքն՝ յիշեալ մատենիկների ապաշրութեան համար ստացած է Մատթէոս Կաթողիկոսէն զլուծումն էրուանց,

պլ դլխովին ուրանալով և իր արածը՝ դայս միայն գրեց· „Ոչ աւելորդ համարիմ ապդ առնել ձերում գերազնու�թեան, թէ 'ի գլեանց գերիմաստ հօր ձերոյ երբէք չեմ պաշտել պոռնկալ“։ Զեմ, ասում է, երբէք ապագրել աուելալ· բայց ապագրել տուած էր վաղ ևս 'ի 1865 թուականին, դուցէ կարծելով՝ թէ ոչ ամենայն ծածուկ բան 'ի յայտ գայ· բայց սխալուեցաւ իւր կարծեաց մէջ աւետարանի աշակերտն, և Աւետարանական բանն անվրէպ կատարուեցաւ· յայտնուեցաւ ծածուկն և հաւատեցաւ ոչ միայն գրաւոր վկայութեամբ ապարանին, որոյ մէջ եղած էր ապագրութիւնն, այլ և պաշտօնական կերպիւ 'ի Կաւկասեան Գրաքննական ժողովի կողմանէ։

Այս տեղ պիտոյ է մտածել· եթէ արդարև Կոստանեանց Հայրն ստացած էր Մատթէոս Կաթողիկոսէն իմ հօր (Մսեր Մսերեանցի) մատենիկների ապագրութեան համար՝ իրաւունք կամ թոյլտուութիւն, և կամ՝ որպէս ինքն է գրում՝ գլ-ձ-ն էր-ան, և եթէ յոյս ունէր այնով արդարանալ, ինչո՞ւ չծանոյց ինձ այն ժամանակ, և վասն էր զապագրելը ևս ուրացաւ։ Ոչ ապաքէն այս յայտնի ապացոյց է՝ պատճառանութեան անտարդ լինելու, որ նոր այժմ իրր յոչընչէ գոյացուցեալ գինի շրջս և հինդ ամաց 'ի մէջ է բերում՝ նա իւր առ Սինոդն յղած յայտարարութեան մէջ։

Երկրորդ պատճառ այն է՝ որ 'ի նախադրան իմ հօր (Մսեր Մսերեանցի) մատենիկների, որք 'ի լոյս ելան Կոստանեանց հօր ապագրութեամբ, դրոշմած կան և հետևեալքդ· „'ի Հայրապետութեան Տ· Տ· Մատթէոսի Ամենաբնակիր Կաթողիկոսի ամենայն Հայոց· Տփխիս··· 'ի ապարանի Հ· Էնֆիաճեանց··· 1865“։ Այս տողերից երևում է թէ այդ ապագրութիւնն եղած է յիշեալ Հայրապետի կենդանութեան ժամանակում փոքր մի յառաջ քան զնորա փոխումն յաստեացս, որ եղև 'ի 22 Օգոստոսի նոյն ամի։ Ապա արեմն, եթէ և Կոստանեանց Հայրն նորանից էր ստացած զՀրամանը, կամ նորա բաւերով՝ զլուծումն իրաւանց, վասն ապագրութեան, պարտական էր անշուշտ դրոշմելու և զայս բանս· „Հրամանաւ Տ· Տ· Մատթէոսի Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց“, քանզի առանց այսր՝ չէր կարող և ոչ մի ոք գուշակել մարդարէաբար, թէ այդ գրքոյկի տպել տուողն ստացած է և ունի զլուծումն

իրաւանց։ Բայց նա չարաւ դայս, և չէր կարող առնել· ինչո՞ւ-վասն զի դեռ ևս չէր ստացած զայն անուանեալ էրա՞ռանց լո՞ժոմբ, որ յաշխարհ մնաւ, որպէս ինձ է թուում, յետ յաշխարհէս ելանելոյ Աստուածընտիր Հայրապետին։ Եւ զայլ այս իսկ է պատճառն՝ որ նա առ Սինոդն յղած յայտարար թղթին մէջ՝ չէ յայտնում, թէ երբ, ո՞ր տարիում, ո՞ր ամսում և ո՞ր օրում՝ ստացած է ինքն զլուծումն իրաւանց։

Երրորդ պատճառ այն է՝ որ հանդուցեալ Մատթէոս Կաթողիկոսի ուղղամտութիւնն, արդարասիրութիւնն, սրտի բարութիւնն և բարոյ անկեղծութիւնն, ևս և առ իմ հայրն ունեցած առանձին իմն առաւելութեամբ հայրագութն՝ թոյլ չէն տալիս ինձ մնալիս չափ խոտորնակ կարծիք ունենալ, և հաւատալ՝ թէ Օծեալն այն Աստուծոյ՝ քահանայապետն սուրբ՝ անհաւատարիմ և անհաստատ գտանուելով ճշմարիտ սիրոյ օրէնքին պահպանութեանը մէջ, կամեցած լինի՝ իւր վաստակաւոր մտերմի, զոր սիրում էր սերտիւ սիրով և յարգում էր միշտ թէ բանիւ և թէ արգեամբք, այդպիսի փոտս հասուցանել, համարձակութիւն տալով ընդդէմ օրինաց սերութեան՝ քահանայի ուսմանն, ինքեան ոչ շատ ծանօթ մարդուն, քակել՝ բառնալ իմ հօր սեպհական հեղինակական իրաւունքը։ Քակել ասում եմ կամ բառնալ, քանզի այդ մարդով միայն կարելի է հասկանալ այս տեղ լո՞ժանել բառը· և լո՞ժանել զէրա՞ռանս՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ խափանել, ջնջել, ՝ի դերև հանել կամ ունայնացուցանել զայն ամենայն՝ որ կարգուած է օրէնքով։ Իսկ ասելն „լուծումն իրաւանց տալ կամ ստանալ վասն տպագրութեան“ հայկական լեզուիս քաջ հմուտ եղող անձանց անդամ՝ անհասկանալի է ըստ ամենայնի։ Այսպիսի խորթութիւն և օտարութիւն ոճոյ չէ կարելի ընծայել դիշի Աստուածիմաստ Հայրապետին, որ վարժ էր և յաջողակ ՝ի կանոնաւոր հիւսուած բանի, և քաջիկ գիտէր դարձ ածել բառերը ըստ բուն և հարազատ նշանակութեան։ Բայց յայտմանէ, ուշադրութեան արժանի է այդ բանումդ և այն՝ զի որոշակի չցուցանուում՝, թէ ո՞ր դրքուկի տպագրութեան համար ստացած է Կոստանդնոյ հայրն զլուծումն իրաւանց· որովհետև ասում է միայն անորոշ բանիւ „վասն տպագրելոյ դՔրիստոնէական վարդապետու-

թիւն անուանեալ գրքոյկն»։ Իսկ այդպիսի վերնագրով շատ կան գրքոյկներ, այլ և այլ հեղինակների, տպեալք թէ՛ ի Ռուսաստան և թէ՛ ի Ցաճկաստան։

Կան և այլ նոյնատեսակ դպրոցական գրքոյկներ, որոց մէջ ուսանդուում է մի և նոյն ուսումն, այսինքն՝ Քրիստոնէական վարդապետութիւն, բայց նոցա անուանքն զանազան են. մէկի մակագիրն է «Սկզբունք Քրիստոնէական վարդապետութեան», մէկի՝ «Վարդապետութիւն ուղղափառութեան», մէկի՝ «Հրահանգ Քրիստոնէական վարդապետութեան», մէկի՝ «Հրահանգ Քրիստոնէական հաւատոյ», մէկի՝ «Հրահանգ վարդապետութեան Կրօնի», մէկի՝ «Ուղղագոյն Քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան», մէկի՝ «Կրթութիւն Աւետարանական», մէկի՝ «Կրթութիւն Քրիստոնէական վարդապետութեան», մէկի՝ «Կրօնագիտութիւն», մէկի՝ «Վարդապետարան Կրօնի», մէկի՝ «Հոգեվարժութիւն», մէկի՝ «Քրիստոնէական ուսանելի կամ՝ Վարժիչ Քրիստոնէից», մէկի՝ «Լապտեր Հոգւոյ», և այլն։ Ուստի այսպիսի դասագրոց համար հրաման ասուօղն՝ պարտական է դէրբաքանչիւրը ճշդիւ որոշել կամ՝ գրքուկի բուն մակագրովը, և կամ՝ հեղինակի անուամբը, և կամ՝ երկուքով ևս։ Բայց որովհետև այդ հրամանագրի մէջ, որով Կոստանդեանց Հայրն ստացած է զլուծումն իրաւանց վասն տպագրութեան, չէ՛ յիշուում՝ բնաւ՝ ոչ հեղինակի անունն, և ոչ բուն գրքուկի մակագիրն, յայտնի է ուրեմն՝ թէ հրամանատուի բանն չէ՛ հայում յատկապէս իմ՝ հօր մատենիկների տպագրութեանց, վասն զի նոցա մակագիրն ոչ է «Քրիստոնէական վարդապետութիւն», այլ՝ «Մանր ուսմունք Քրիստոնէական հաւատոյ Սրբազան պատմութեան Աւետարանի», որ քաջ յայտնի էր Մատթէոս Կաթողիկոսին, ըստ որում՝ երկու անգամ՝ նա ինքն վաւերացուցած էր նոյն մատենիկները իւր Հայրապետական կնքովը և ստորագրութեամբը։ Իսկ եթէ ընդհանրապէս առնուի այդ բանդ, այն ժամանակ հարկաւ պիտոյ է ասել՝ թէ Կոստանդեանց Հայրն՝ զէր և իցէ «Քրիստոնէական վարդապետութիւն» անուանեալ գրքոյկները կարող է ինքնակամ՝ ի տիպ արձանացուցանել յօգուտ իւր՝ ի դերև հանելով նոցա հեղինակաց իրաւունքները, ըստ որում՝ Մատթէոս Կաթողիկոսն ստացած է զլուծումն իրաւանց։ Եւ ո՞վ կարող է ասանել այսմ՝։

Պարկեշ է թէ գասնուի որ՝ որ մեղադրութեան արժանի համարէ այդ բանի համար գՀանդուցեալ Կաթողիկոսը· բայց ինձ քա՛ լեցի այդպիսի ինչ մտածել Աստուծոյ մարդոյն վերայ, այլ ինչպէս խղճմտանքս ազդում է կՀաւանիմ մանաւանդ գնախագրեալ անկարդ բանը՝ մի՛ այլ փցուն գրչի ծնունդ համարել, քան թէ իսկական գրուած Երանաշնորհ Հօտապետին։

ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՇԻՆՈՒԹԻՒՆՆ։

„Փարոսի“ նախընթաց տետրակին մէջ յայտնած մեր ցաւակցութիւնը 'ի մասին կարճատեղեկութեան, զոր տուաւ ռուսերէն „Нива“ օրագիրն՝ Էջմիածնական Ակադեմիայի վերայ, այժմ լսուցանում է պ· Մելիք Թիշին, Մշէն 9 երբդ համարին մէջ տպուած նամակով, որի մէջ գտանում ենք հետեւեալ բացատրութիւնը, կամ լաւ ևս ասել նոյն իսկ Ակադեմիայի վերայ լիակատար տեղեկութիւն։

„Բայց դու մի՛ մոռանար, ասում է պ· Մելիք Թիշին, նոյնպէս Էջմիածնի մեծագործութիւնն էլ, ահա տես վանքի պարսպից դուրս այդ երկայարկեան նոր շինութիւնը, որ դեռ աւարտված չէ, տես դրա նեարը, շատ սենեակները, կարգա՛ դրան ճակատի այդ մարմարեայ քարի վրա ոսկեքանդակ շրջանակով դրած արձանագիրը· „Ողորմութեամբն Աստուծոյ ազգասէր Կաթողիկոս ամենայն Հայոց Տ· Տ· Գէորգ Գ· Կ· Պոլսեցի յոգեներջան ազգասէր-մեծամբ կառոյց զայս ճեմարան վասն

ժառանգաւորաց մայր Ամենայն արքոյ Էջմիածնի, արդեամբ վեհափառն Սարգիսեանայ և օժանդակութեամբ Հայոց Բնակիչաց 'ի սահման Ռուսական Նահանգին յամի Փրկչի 1871-ն Հայոց ՌՃԻ“:

„Ահա արձանագրից իմացար, շարունակում է պ. Մելիք Պիշեն, որ դա է Էջմիածնի ճեմարանը, որին բնակիչները ակադեմիա անուն են տալիս, այդ տեղ մեր ներկայ Վեհափառ Հօր մեծագործութեանց մեկն է, այդ տեղ պիտի ուսանին և կանոնաւոր կրթութիւն ստանան մեր ապագայ հոգևոր հայրերը, այդ տեղից պիտի աւարտեն մեր քահանայացուքը, որ երկար չտևէ ներկայ հոգևորականութեան խայտառակ ապիտութիւնը: Ինչպէս լսում ենք, արդէն պատրաստված են ուսումնարանի արգեանց աղբիւրները և շէնքը վերջանալուն պէս պիտի հրաւիրվին ուսուցիչներ և ուսանողներ“:

Ուրեմն „Нива“ օրագրի տուած տեղեկութիւնն միայն Ակադեմիայի չոր որմոց, և ոչ թէ ուսմանց կամ դիտութեանց աւանդուելոյն վերայ է եղած, և այդ իսկ է պատճառն, որ Աբարպան (որպէս մեք կարծում ենք), խորին լռութիւն է պահում յայտմ մասին:

„Փարոսն“ ուրախութեամբ կտպագրի իւր էջերի մէջ Էջմիածնական Ակադեմիայի տրտաքին ձևը՝ պատկերը, եթէ այն ուղարկուի իւրեան:

ՎԻՓԼԷՐ։

Փոքրոյ առաջին տեսարին մէջ տպագրեցինք երևելի աստեղաբաշխ Կոպերնիկոսի պատկերը Համառօտ տեղեկութեամբ նորա չորս հարիւրամեայ յոբելեանի վերայ։ Այսօր արժան եմք համարում զարդարել խմբագրիս էջերը նաև առաջին Գերմանացի աստեղաբաշխի պատկերաւ, այն է՝ Քէպլէրի, որոյ երեք հարիւրամեակը ոտնուեցաւ 1871 թուականին։

Յովհաննէս Քէպլէր ծնաւ Դեկտեմբերի 15 ին 1571 թուականին Վոյլգատ գիւղում՝ ի Վիւրթէմպէրկ, և վախճանեցաւ վերջին աղքատութեան մէջ՝ ի 5 Նոյեմբերի 1630 ամի։ Գլխաւոր աշխատութիւնն Քէպլէրի ունի այսպիսի վերնագիր. „Astronomia novo seu physica cœlestis tradita commentariis de motibus stellæ Martis, ex observationibus Tychonis Brage.“ Մոլորակների շրջաբերութեան կարգի գիւտն անմահացոյց Քէպլէրի անունը։

Հայոց ազգից ևս եղած է արդէօք աստեղաբաշխ։

Այո՛ մեր մատենագիրներից յիշատակուած տեսանում եմք երեք նշանաւոր անձինք այս գիտութեան մէջ ծաղկած, որք են. Ա. Անանիա Շիրակացի՝ եօթներորդ դարում. Բ. Մխիթար բժիշկ Հերացի՝ երկուտասաներորդ դարում. և Գ. Մխիթար Անեցի՝ երեքտասաներորդ դարում։ Սոցա վերայ պիտի խօսիմք խմբագրիս յաջորդ տեսարէի մէկի մէջ։

ԻՇԽԱՆ ՄԱՏԱԹՈՎ։

Իշխան Վ. Գ. Մատաթովի կենսագրութեան նկարագրութիւնը, զոր անում է նորա այրի կինն՝ Գենեռալ Փասքեվիչի Կովկասից ուղարկած յայտարարութեանց առթիւ, ի լոյս ելաւ „Русская Старина“ անուն ռուսերէն ամսագրի առաջին տետրին մէջ ներկայ 1873 թուականի։

Իշխան Մատաթովն մի էր այն անձինքներից, առ որս Կովկասից եկած յայտարարութիւնքն, յետ Երմոլովի, առաւելապէս անդիմականք էին։ Իսկ յիշեալ կենսագրական նկարագրութիւնն անհերքելի է կացուցանում այժմ՝ թէ Փասքեվիչն իւր առաջին փառաւոր գործովը ի Կովկաս, Էրէսաւեռպոլու մօտ, գլխովին պարտական էր Իշխան Մատաթովին, այն է՝ որպէս սկզբնական մտածութեամբն նոյն գործոյ, նոյնպէս և նորա կատարմամբն։ Իշխան Մատաթովն հանդիպեցաւ այն՝ ըստ բաւականին սաստիկ՝ վշտի և դժբաղդութեան, որ հասած էր Երմոլովին՝ Փասքեվիչի յայտարարութեանց պատճառաւ։ Իշխանուհին պատմում է այժմ՝ թէ նիւթքն յիշեալ յայտարարութեանց համար ժողովուում՝ էին տեղ տեղ, զոր օրինակ Շուշուայ ամրոցում, թմբկահարութեամբ և բարձրաձայն աղաղակով՝ որ գանգատներ մատուցուին Մատաթովի վերայ։

Արդեօք այսպիսի յայտարարութեանց պատճառաւ դժնդակ բաղդի արկածից չէ՞ հանդիպած և այլ սմն երջանկայիշատակ անձն՝ բաղմնք նշանաւոր քան զՄատաթովն։

ՄԱՏԻՆԱՊԻԱՐԱՆ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՂԱԶԱՐ Ց. ԼԱԶԱՐԵԱՆՑԻ։

Աւստրիոյ տէրութեան նախարար և սենեկապետ գրան Աւստրիոյ Կայսեր՝ Կոմս վ. Համսան-Սկոլնիցքիյ՝ նուիրեց Ս. Փեթերպուրգայ Կայսերական մատենադարանին ՀԳԳ հաղար հատորի չափ մատեանք, որ նա գտեալ հանգուցեալ Ղազար Ց. Լազարեանցի ժառանգներից։ Կամ արդեօք այդ հատորոց մէջ և Հայերէն մատեանք, և որքան, դեռ մեզ յայտնի չէ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻՑ ՆՈՐ ՊԱՏԿԵՐՆ։

Ա՝ներ ազգակցի և երևելի պատկերահանի Յովհաննէս Այվազովսկոյ վրձինէն ելաւ նորերումն դարձեալ մի նոր պատկեր, որ կատարելութեամբն ամենեցունց ուշը դարձուցած է իւր վերայ։ Այս պատկերի համար նիւթ առած է Պ· Այվազովսկին Աստուածաշնչէն, այն է՝ Իսրայելացւոց անցքը կարմիր ծովէն։ Նկարիչն պատկերացնում է այն րոպէն՝ երբ որ Իսրայելացիք անցան ծովը, և երբ որ նոքա երգում էին առ Աստուած գոհաբանական երգը իւրեանց աղատութեան համար, և ահեղաստաս լեռնակուտակ ալիքներն կարմիր ծովու կլանում էին Փարաւոնի անհամար զօրքը։ Մովսէս Մարգարէն և Իսրայելացիք մի կողմից, և Փարաւոնի զօրքն միւս կողմից՝ հրաշալի իմն լաւով լուսաւորուած են, և ծովու փրփրադեղ ալիքներն կենդանւոյն կանգնած կան մարդոյ առաջև։

ԲԱՌԱՐԱՆՆ ԲԻՐՈՑԵԱՆՑԻ։

Փարոսէս նախընթաց տետրին մէջ յիշեցինք՝ թէ զկնի մեռնուան Սիրաչի Բերոյեանց՝ մնայ նորա ձեռագիր բառարանն 'ի Ռուսերէնէ 'ի Հայ։ Այժմ աւելորդ չեմք համարում ծանուցանել՝ թէ յիշեալ երկասիրութիւնն գտանուում է ՅԱստրախան՝ հանգուցելոյ ազգականների մօտ, և վաճառուում է։

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ։

Փեթերպուրկեան համալսարանի Հայոց գրականութեան ուսուցչապետ Պ· Քերովբէ Պատկանեանի աշխատութեամբ հրատարակուեցաւ ներկայ 1873 թուականիս սկզբում՝ բաց 'ի Մաղոլայ պատմութենէն, որ յիշատակուեցաւ այս տետրիս մէջ, նաև Ականց անունների և հատկութեանց վերայ քննութիւնն՝ ըստ կարծեաց հայերի՝ եօթնեւտասներորդ դարում, ընդ վերնագրով· „Драгоцѣнные камни, ихъ названія и свойства по понятіямъ Армянъ XVII вѣка“.

ԿԸՕՆԻ ԴԱՍԱՏՈՒԹԵԱՆ ԾԱՂԻԿԻՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ։

Մ՝ԼԿ լրագիրն՝ իւր 19 համարին մէջ ներկայ 1873 ամի, պատմում է՝ թէ ինչպէս Թիֆլիզի Ներսիսեան դպրոցի կրօնի հարցաքննութեան ժամանակ՝ նոյն դպրոցի կրօնուսոյց վարժապետն առաջարկում է եղած աշակերտին այսպիսի հարցմունք. „Ո՞նչ գիտաւորութեամբ Աստուածը վաղ չուղարկեց Քրիստոսին մեր մեղքերը սրբելու համար, այլ այսքան ժամանակ թողից մարդկութիւնը մեղքերի մէջ“։ Մ՝ԼԿ՝ պատուելի կրօնուսոյց վարժապետի՝ որպէս այս, նոյնպէս և սորա նման միւս անհարմար և անհանճար հարցմունքներին ցոյց է տալիս միայն զարմանք. իսկ մեք բայ՝ի մեր զարմանքը՝ յայտնում ենք նաև մեր լիակատար ցանկութիւնը իմանալու՝ թէ արդեօք որի՞ և ո՞ր տեղ տպած „Քրիստոնէականի“ վերայ է լինում Ներսիսեան դպրոցում այսպիսի դասատուութիւնն, և եթէ նոյն „Քրիստոնէականն“, որի մէջ գտանում են այսպիսի հարցմունքներ, գիւտ տպած չէ և ձեռագիր է, արդեօք նոյն ինքն Կրօնուսոյց վարժապետի՝ Ա. Ղևոնդ քահանայի՝ երկասիրութիւնն չէ՞։

Մ՝ԼԿ նոյն 19 համարին մէջ պատմում է և այս՝ թէ նոյն կրօնի հարցաքննութեան

ժամանակ մի աշակերտից հարցանում են· „ի՞նչ է, հարկաւոր քահանային“: Եւ աշակերտը „պարկեշտութիւն, լաւ բարք, խոնարհութիւն“ և այլ քանի մի յատկութիւններ յիշելէն յետոյ՝ յաւելացնում է „էլ էլ ո-ա-ա-ռ“:

„ՈՂՋՈՅՆ“ ԵՒ „ՌԱՐԵՒ“:

Աբարաք ամսագրի ներկայ ամի փետրուար ամսեան տետրակին մէջ Մանկունի վարդապետի „Եօթն խորհուրդք եկեղեցւոյ“ վերնագրով յօդուածի տակին եղած մի փոքրիկ ծանօթութիւնն հարկաւորում է զմեզ քանի մի խօսք խօսել:

Դերասատիւ վարդապետի կարծիքով աշխարհական անձանց՝ միմեանց ողջոյն ասելն անպատշաճ է, վասն զի որպէս թէ եկեղեցականաց միայն յատկացեալ է այն Հայոց մէջ:

Մանկական և ծիծաղելի վարդապետութիւն ներկայ ժամանակումս: Դերասատիւ վարդապետի այդ կարծեաց դէմ բաւական եմք համարում առաջարկել նմա զհետեւեալ հարցմունքը:

Հայոց եկեղեցումը պատարագի ժամանակ սարկաւագի բարձրաձայն ղոչելն· „ողջոյն տուք միմեանց“, առ ո՞վ է միայն· առ եկեղեցականս, թէ և առ եկեղեցականս և առ ժողովուրդն համանդամայն: Եթէ միայն առ եկեղեցականս, ուրեմն ժողովրդականքն չպիտի ողջոյն տան մի-

մեանց. իսկ եթէ առ եկեղեցականս և առ ժողովուրդն համանգամայն, ուրեմն հարկաւոր է այսուհետև ընդոյն 'ի սրբոց հայոց գրուած բանը. „ողջոյն տուք միմեանց“, փոխել այսպէս. „ողջոյն տուք միմեանց, ով եկեղեցականք. բարև տուք միմեանց, ով ժողովրդականք կամ աշխարհականք“:

„ԱՄԵՆԱՑՆ ՍՐԲՈՑ“ ՏՕՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՕՐԵՐՆ:

Փարոսի նախընթաց տետրին մէջ (յէջ 31—32) ցոյց տուինք մեր օրացոյցներուն մէջ նշմարուած անկարգութիւնն 'ի մասին „ամենայն սրբոց“ տօնի օրի կատարման: Այժմ աւելորդ չենք համարում 'ի մէջ բերել այս տեղ 'ի Մսերայ Մաղիստրոսէ գրեալ հետևեալ խրատը և ազիւսակը նոյն տօնի կատարման օրերի համար, որք գտանուեցան նորա թղթոց մէջ:

„Տօն ամենայն Սրբոց կատարի միշտ 'ի միջոցի Ուտեաց շաբաթուցն՝ որ 'ի Տօնէ Վարագայ Խաչի մինչև յԲարեկենդանն Յիսնակի (այս է՝ 'ի Հոկտեմբերի 31 էն մինչև յ20 Նոյեմբերի), կամ որոշակի ևս ասացուք՝ ոչ յառաջ քան զ31 Հոկտ. և ոչ յետ 20 'ի Նոյեմբերի և միշտ յաւուր Շաբաթու, որպէս ցուցանէ յայտնապէս Տօնացոյցն 'ի Տարեգիրսն՝ Ա. Գ. Դ. Զ. Է. Ը. Ժ. Ի. Ի. Կ. Զ. Ղ. Մ. Յ. Շ. Ո. Պ. Ջ. Ռ. Տ. Ր. Ի:

ՄԵԾԻՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՄԵԾԻՐԵԱՆՑ

Ի ՀԱՍԱԿԻ 65 ԱՄԱՅ

„Պատահէ·

Ի Հոկտ·	31·	մինչ	տարեգիրն լինիցի՝		Ա· Ր· Ա· Ն· Ա։
Ի Նոյ·	1·	»	»	»	Հ։
» »	2·	»	»	»	Գ· Ժ· Զ· Ա· Տ։
» »	3·	»	»	»	Գ· Ի· Գ· Զ· Բ։
» »	4·	»	»	»	Ց։
» »	19·	»	»	»	Ջ· Խ· Մ· Ջ· Ի։
» »	20·	»	»	»	Ի։

„Զոհ Ի Շաբաթ աւուր կատարելի է ածես, առ Ի Տօնացոյցն, Ի խրատն՝ որ յետ Խաչ գիւտի, և Տաներորդ Պիւրակէի զկնի ածնի Վերայ· Խաչի“։

ՄԱՀ ՄՍԵՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՍԵՐԵԱՆՑ

„Խորհեցան և խօսեցան զարդարոյն՝ գանիրաւութիւն· ոչ ընտրեցին զպատիւ ոգւոյն անարատի· զի կուրացոյց զնոսա չարութիւնն իւրեանց“։

Եթէ ես կորուսի զիմ պատուական հայրը՝ Հայոց ազգն ևս կորոյս իւր հարազատ անդամոց մինը· Հայոց եկեղեցին՝ զիւր արիաջան մշակը, և Հայոց մատաղ սերունդն՝ զիւր անխոնջ հոգևոր ուսուցիչը։ Ով չգիտի ցաւի լսելով Մսեր Մագիստրոսի մահուան դառն համբաւը, ով չգիտի միան բերէ ալևորեալ ծերունւոյ զուարդ և բարի դէմքը, ով չգիտի յիշէ նորա անցեալ օրերը՝ երբ որ նա գիշեր և ցերեկ գրիչն Ի ձեռին անդադար աշխատում էր յօգուտ և Ի փառս

եկեղեցւոյ և գրականութեան։ Զգիտեմ կգտանուի արդեօք մարդ, որ կարողանայ առանց առանձին իմն ջերմեռանդութեան և առանց սրտաբուղխ յիշել նորա անունը, նորա գրական վաստակքը և գիտութիւնը։ Ճշմարիտ է, հանդուցեալն այս անցաւոր աշխարհումն արժանապէս չճանաչուեցաւ յիւր ազգէն, այլ ընդհակառակն՝ շատ անգամ բամբասանաց և մեղադրանաց ևս ենթարկեցաւ, բայց այսու ամենայնիւ՝ Աստուծոյ շնորհն և գթութիւնն, որք վէր են քան զամենայն, ակն յայտնի երևեցան նորա վերայ գինի մահուան, որպէս արդար վարձ նորա անխոնջ աշխատանացն։ Վասն զի նորա դադաղի չորս կողմում կանգնած հանդիսականք՝ հիացած և զարմացած մնացած էին նորա կենդանի և պայծառ դէմքին՝ որ զմայլեցնում էր և ապշեցնում։ Այդ էքնադութիւնն շքեղազարդուում էր նաև ծաղկահիւս դաբնեայ պսակով՝ որ կայր շուրջ հանդուցելոյ ալևորեալ գլխով, և որ տալիս էր նորան առանձին իմն գեղեցկութիւն։

Յոյս ունիմք և աներկբայ եմք՝ որ ապագայ սերունդն աւելի արդարադատ լինի ծերունի Մաբրին, նորա գործքերը և աշխատանքը քննելու և գնահատելու ժամանակ։

Այո, մեծ է մեր կորուստն, մեծ է ասում եմ, որովհետև այժմեան ժամանակումն այսպիսի անձինք, այնպիսի գիտութեամբ և հմտութեամբ

Հայոց լեզուին և Հայասանեայց եկեղեցւոյ կրօնին մէջ, յոյժ սակաւ են։ Ուստի Մսեր Մաշտոցիսարոսի տեղն երկար ժամանակ, անտարակոյս, պարապ պիտի մնայ և զգալի պիտի լինի։ Ծնեւրուունի Մսերի մահն ստուգելու է առաջը՝ որ ասում է· „կատու չեղած տեղ՝ մկներն պար կուգան“։ Եւ ճշմարիտ, այժմ պիտի սկսին պար գալ մեր կարծեցեալ ուսումնական հայկաբանքն և ատուաձաբանքն։

Երկարօրէն պատմել մեր ծնողի կեանքը՝ առ այժմ աւելորդ եմք համարում և անհարմարուստի թող բաւական համարուի մեզ յիշել այս տեղ՝ թէ հանգուցեալն անընդհատ աշխատում էր և զբում վերջին դարու Հայոց կաթողիկոսաց և ազգի պատմութիւնը, բայց իւր այս գործը 'ի կատար հասուցանել չկարողացաւ։ Ընձամբ ծանօթ լինելով շատ գործերի, ևս և ունելով հաւատի տեղեկութիւնք և ժողովուած նիւթեր վերջին ժամանակի ազգային անցից վերայ, անտարակոյս՝ նորա գրած պատմութիւնն նմանելու էր Ուեհաս Պէրպէրեանի „Հայոց Պատմութիւն“, այլ լինելու էր մեր մատենագրութեան և ազգի համար՝ երկրորդ Խորենացւոյ պատմութիւն։

Հանգուցեալն իւր երիտասարդութեան ժամանակ՝ գրած էր, կարծես թէ մարգարէական ոգւով, վհատեալ ողբը առ մահ, որ այժմ խլեց տարաւ զնա յաշխարհէս·

ՈՂՈՔ ԱՌ ՄԱՀ։

«Մի՛ երազեր, Մահ, մի՛ մերձենար յիս,
Թոյլ տուր ծերանալ, վայելել յաստիս։
Արդ գընա՛,
Համբերեա՛
Զի դեռ՝ կենացս
Շատ օր կայ։

«Սակաւ առ սակաւ ինքնին առ քեզ դամ՝
Զանօրէնն յերկրէ դու բարձ տարաժամ։
Ես Հայ եմ,
Խուժ՝ դուժ չեմ՝,
Զիմ Տէր Հաստիչ
Ճանաչեմ։

«Երիտասարդիս շատ պիտին օրեր
Զի գրտայցս իմում՝ աղգին օգտաբեր։
Եղիցի
Եղիցի,
Ամէն ամէն
Եղիցի։

«Իսկ գրոյ նըման, ո՛ Մահ, է քո կարթ՝
Որով գընդուվին քարշես զամէն մարդ։
Մի՛ բաւնար
Իրաւնաբար
Ընդ ամբարիշտս
Զայր արդար։

Ահեր Գրիգորեան Մսերեանց Ծնաւ՝ի Զմիւռնիայ՝ի 1808 թուին, և վախճանեցաւ՝ի Մոսկուա՝ զկնի 14 օրեայ հիւանդութեան՝ յ2 Օգոստոսի ներկայ 1873 ամի, ՝ի հասակի 65 ամաց։

ՄԵՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՄԵՍԻՐԵԱՆՑ

ՑՅ ՕԳՈՍՏՈՍ 1873 ԱՄՍ

ՎԵՐՋԱԲԱՆ։

Փարոսի այս տեսքի տպագրութիւնը սկսուելու ժամանակ ոչ կարող էր մտածել՝ թէ նորա վերջին թերթերն պիտի տպագրուին արդէն զկնի մահուան նորա զլխաւոր գործակցի՝ Մսերայ Մատիսարոսի Մսերեանց։ Այն, գիտելով այն գեղեցիկ առողջութիւնը, զոր վայելում էր ալևորեալ ծերունին Մսեր, ոչ ոք կարող չէր մտածել, կրկնում եմք, որ նա այսպէս շոյտ պիտի կնքէ իւր օրհասը։

Վերջացնելով Փարոսի երկրորդ տետրը մեք կարող չենք չյիշել մեր հանգուցեալ ծնողն սերը, որ ունէր նա այս հրատարակութեանս, սերը՝ ասում եմ՝ որով ողևորուած էր նա խմբագրիս համար աշխատելու ժամանակ։ Մինչև մահուան վերջին րոպէն՝ նա խօսում էր Փարոսի նիւթոց վերայ. մտածում էր այնոր օգտակարութեանը և հարկաւորութեանը վերայ. „Փարոսն, ասում էր նա, հարկաւոր է շարունակել, և երկրորդ տետրի տպագրութիւնը վերջացնել։ „Զայն Բաղմաց“ գիրքը հարկաւոր է քննել և յերևան հանել այնոր մէջ սպրդուած սխալները. ըստ որում այդ գիրքդ հայելի է այն դրութեան, որոյ մէջ գտանուում է այժմ մեր գրականութիւնն“։ Եւ յիրաւի, ոչ փոքր զուարճութիւն պատճառեց հանգուցելոյն՝ հիւանդութեան ժամանակ՝ „Զայն Բաղմաց“ գիրքն (որ նոր ընկած էր նորա ձեռքն), ըստ որում նա տեսաւ նորա մէջ տպագրուած նաև այնպիսի

ճառեր, որք՝ որպէս յայտնի էին հանդուցեալին՝ ասացուած էին Գէորգ Կաթողիկոսէն շատ յառաջ՝ ի պատիւ այլոց եպիսկոպոսաց, և մանաւանդ նոյն գրքին մէջ մեր Վ. Հայրապետ Գէորգ Կաթուղիկոսի և Էջմիածնի և Ամենայնի Գէորգ կոչուիլն։

Կատարում եմք մեր հանդուցեալ ծնողի վերջին ցանկութիւնը և վերջացնում եմք սոյն տեսարի տպագրութիւնը։ Բայց Փարոսն կարող չէ հրատարակաւ չխոստովանել այն մեծ կորուստը, որ ունեցաւ նա Մսեր Մաղիստրոսի մահուանէն։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

Հարկաւոր եմ համարում ծանուցանել՝ թէ իմ հօր Մսեր Մաղիստրոսի մահուանէն յետոյ՝ նորա գրականական աշխատութեանց (լինին թէ տպագիր և թէ ձեռագիր) սեպհականութեան իրաւունքն անցան իմ վերայ՝ որպէս նորա օրինաւոր ժառանգի, և թէ ես խստիւ պիտի պահանջեմ այն ինամները, որք յառաջ կուզան նոյն երկասիրութիւնքը տպագրողներից և հրատարակողներից։ Նոյնպէս աւելորդ չեմ համարում ազդ առնել՝ թէ ես արդելում եմ նաև հրատարակել իմ հօր թէ Կրօնական և թէ Հայոց լեզուի ձեռագիր դասատետրերը, որք գտանուում են նորա աշակերտաց մօտ, ևս և՝ ի դործ դնել զայնս դասատուութեան ժամանակ։

Օրմայր Մսերեան Մսերեանց։

Վրէպ։ Տետրիս 33 երեսում տպուած ծանօթութիւնն պատկանի 32 երորդ երեսին։

Օրմայր Մսերեանց։

5· ՆՈՐ ԱՅԲՈՒԵՆԱՐԱՆ Հայերէն և Ռուսերէն· Զարմայրայ Մ· Մոեբէանց· Գին իւրաքանչիւրոյ 25 կ· արծ·
Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 22 կոպ·
„ „ „ 50 „ „ 20 „
„ „ „ 100 „ „ 18 „

6· ՃՌԱՔԱՂ՝ կրօնական, բանասիրական և ազգային դիտելեաց վերաբերեալ յօդուածներով լի, և 646 երեսէ բաղկացեալ երկու մեծ հատոր գիրք, գեղեցիկ տպագրութեամբ· Գինն է 3 ռուբ· արծ· հանդերձ առաքմամբ։

7· ՄՍԵՐԱՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՍԵՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ· Հաստատ Ա· ԽՄԲԱԳԻՐ Շափածոյ Բանից· Հեղինակի կենդանագրաւ· Մոսկուա· 1864 ամի, 212 երես։ Սակաւաթիւ։ Գինն է՝ 3 ռուբ· արծ· հանդերձ առաքմամբ։

8· ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական Հաւատոյ ըստ Ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, ընդարձակեալ համապատշաճ վկայութեամբ· Ի գրոց լեզուն հոյն հեղէն· Տիպ առաջին 1850 ամի։ Սակաւաթիւ։ Գինն է 10 ռուբ· արծ· հանդերձ առաքմամբ։

9· ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Դրամատակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1853· 219 երես· գինն է 1 ռ· 50 կ· հանդերձ առաքմամբ։

10· ՂԱԶԱՐԱՑ ՓԱՐՊԵՑԻՈՅ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Մոսկուա, 1853· 68 երես· գինն է 1 ռ· հանդերձ առաքմամբ։

11· ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ քահանայի Վանանդեցւոյ ՃԱՌ ներբողական Ի Սուրբ խաչն Քրիստոսի, և Պատմագրական առասպութիւն Ի սուրբ Նշանն Վարագայ, և Սկևռիանոսի Գաբաղացւոց եպիսկոպոսի ճառ Ի վերայ բանին՝ թէ «Հաւ եկի արկանել յերկիր» և այլն· Մոսկուա, 1853, 118 երես, գինն է 50 կ· հանդերձ առաքմամբ։

Յանկայսդ.ին ստանալ Ի վերոյ նշանակեալ գրքերից կարող են իւրեանց գրովը դիմել առ իս (Зармайру Мсеріанцъ, въ Москвѣ, близь Меньшиковой башни, домъ Милованова), ուղարկելով միանգամայն և պատկանեալ դուսմարը, և ես պատրաստ եմ առաջին փոստիս կատարել նոցա յանկութիւնը։

Զարմայր Մոեբէանց։

„ПАРОСЪ“ въ переводѣ „МАЯКЪ“
Литературный сборникъ.

ВЫПУСКЪ 2-й 1873 г.

ՐՈՎԱԾԵՂԱԿՈՒԹԻՒՆ

Ա· Աղդ: ..... էջ· 1·
Բ· Հայոց Կաթողիկոսաց թղթակցութիւնք Հռոմայ Պապերի հետ: — Թուղթ Աղեքսանդրայ Ա· Կաթողիկոսին Հայոց առ Գրիգոր ԺԱ· Պապն Հռոմայ: ..... » 3·
Գ· Ո՞վ էր Գէորգ երրորդ Կաթողիկոսն: ..... » 29·
Դ· Աղդային Բարերարք վերջին դարու· Ա· Միրզայեան Մանուկ Պէյ և Հնդեանի Հայոց եկեղեցին: — Բ· Գասպարեանց և նորա աղքատանոցն ի Մոսկուա: ..... » 31·
Ե· Դ պաշտպանութիւն Հայոց եկեղեցւոյ: .... » 34·
Զ· Մատենագրութիւն· Ա· Յանոսի յաղագս Պապին: — Բ· Исторія Монголовъ. — Գ· Шараваны. — Դ· Զայն Բազմաց: — Ե· Պատմութիւն Հայոց Պերպերեանի: ..... » 36·
Է· Նար-Իտին Շահ Պարսից (Պապկէր—): » 45·
Ը· Խիվայի Նուաճումը (Պապկէր— և ալեքսանդրայով·): ..... » 47·
Թ· „Լուծումն Իրաւանց“: ..... » 50·
Ժ· Իշմիածնական Ակադեմիայի շինութիւնն: » 55·
ԺԱ· Վրէպիր (Պապկէր—): ..... » 57·
ԺԲ· Իշխան Մատաթով: ..... » 58·
ԺԳ· Մատենադարան Ղ· Յ· Լազարեանցի: .... » —
ԺԴ· Յովհ· Այվազովսկայ նոր պատկերն: ..... » 59·
ԺԵ· Բառարանն Ռէրբոյեանցի: ..... » —
ԺԶ· Կորստիպ մատեանք: ..... » —
ԺԷ· Ղրիմի դասատուութեան ծաղկիլն Ներսիսեան դպրոցում: ..... » 60·
ԺԸ· „Ոգէոյն“ և „Բարև“: ..... » 61·
ԺԹ· „Ամենայն Սրբոց“ տօնի կատարման օրերն: » 62·
Ի· Մահ Մաերայ Մագիստրոսի Մսերեանց (Էրիս— պապկէր—): ..... » 63·
ԻԱ· Վերջաբան: ..... » 67·
ԻԲ· Ծանուցումն: ..... » 68·

Այս տետրակի գինն է 60 կ· արծ:

Дозволено цензурою. С.-Петербургъ, 6-го Сентября 1873 г.